A.L
h-19

# ԹՈՒՂԹՔ

Սբյն Էջմիածնատունս ամ-
պղենաց մրմռոյն ան-
տրոյց Սիոնի.

Ի Մեծահայրապետէ Տն
Ղուկաս Սրբազան
Կաթուղիկոսն ամ
Հայոց.

Եւ ի Պատրիարգէ
Սրբոյն Սաղիմայ՝ Տն
Յովակիմայ Եպսի
Սիոնի.

Տպեալ հրմն Տն
Զաքարիայ ազգա-
սէր Պատրիարգի կոս-
տանդնուպօլսոյ.

1783

## Յառաջ առ ընթերցողս.

Մ ըստորին միջոց մանկունք վար-
ժարանի սբյ եկեղեցւոյս քոյ
զգուշ առնուլ խնամատարն վարժապե-
տացն և որք կիրթքն են ըստ ի
գիտութիւնս հոգեւորական ուսմանց
մեծ այնոց գործ և մեծ այնին որ հա-
ճառոց մեծապաշտութեանց. Մեծ այն
առեմ այնոցիկ որ մեծ ամեն կեցին
յոքի և հաստատեցին զեկեղեցի Սբ
որք ըստ ձի եղեն ըստ ապաշխարումն
և առ Ներկին և սեւնք հաճառոյ և
հիմունք Սբյ եկեղեցւոյ. յորոյն
մի եր և մեծապատւոյ որ հայրապետին
իցատեր ըստ կրշեայն ի քնե ի գիր
կրս, որ հետեայն ի բերդանոյն մեյ. և
մատուն վարժապետին և դասատուայ
կրն մանկանց սեռին. Ծերում և
որք նման իցեն նմա ահա ունին ման
կունք Սբոյ եկեղեցւոյ բազմաւ
ըղձիւ գիտել զգուշ վարուց նոցա
և ունկնդիր եղեալ հետեւիլ ուս-



ման

մանն և քանից նոցա․ որպիսիք ոք էր
և իմաստունն աշակերտեալն Քի̅ն պօղո
սի մեծն ղուկաս․ իբրև զի ասէր
կամ եղև ասէ և ինձ որ իսկզբանէ
զհետ երթեալ էի ա̅մ̅ի ճշմարտութե̅բ̅
քանիցն այնոցիկ․ որպէս աւ̅անդե-
ցին մեզ որք ՛ի սկզբանէ ականա-
տեսք և սպասաւորք եղեն բանին
կարգաւ գրել քեզ․ քաջդ թեո-
փիլէ․ և նմին իսկ ասելի լեալ ա̅մ̅
իմաստից տեղեկացող աշակերտս քն̅ի,
զհետ երթայ բանից սր̅ց առաքելոց
և մարգարէից և հարց սր̅ց․ հրա-
ժարեալք բաս խորատս տ̅ե̅ր̅ն պօղո
սի յա̅մ̅ առաքելոց հերձուածոց
և յա̅մ̅ պառաւական բանից ոգէտ
և անձնահաճ արանց որք և ՛ի ժամա-
նակս հինս եւս գտանէին, որպիսիք
ոք դիմադարձեցեալն էր և սիմոն․ այլի
ոք ելիմաս մոգն էր և շիմոր հրէայ
քըն և այլք․ և որպէս պատմէ սր̅ն
պետրոս, լինէին ասէ և սուտ մար
գարէք ՛ի ժողովրդեանն որպէս և


այժմ

պաժմ ՚ի ձեզ լինիցին սուտ վարդապետք. և այլք այսպիսիք բանք յոլովք, որք սակս անձինց և ապականեալ արանց ասացեալք. յորոց ՚ի բաց կան միշտ որք զուղիղն խորհին և կամք են նոցա յար լսել այնոցիկ որք լծեան յայս, ուսան ՚ի քսէ և լցեալք եղեն շնորհօք հոգւոյն սրբոյ. յորոցն կարգի են և ուսումնասէր մանկունք հայաստանեայցս մերոյ եկեղեցւոյ. որք ՚ի սկզբանց անտի ՚ի քսէ և սրբոց առաքելոցն ՚ի Թադէոսէ և ՚ի Բարթուղիմէոսէ և ՚ի Սրբոյն Գրիգորէ մեր լուսաւորչէ ամենա ճշմարիտ սրտիւ զհետ եղեն ճշմարտութեանն և բանից այնոցիկ որք ապասաւորք և ականատեսք եղեն բանին այ տն մերոյ յսի քսի ըստ գրելոյն սրբոյն Ղուկասու. Այլ զի ընդ այսու ժամանակաւ հաւաքիւր երանելին իգնատիոս ՚ի բանս իւր եթէ իցեն արդարև նորա թուղթք ածաշունչք և խրատականք գրեալք

առ եկեղեցիս, 'ի ժամանակի մար-
տիրոսութեանն իւրոյ. և թէ զօն
առ մեզ նոյնք թուղթք. 'ի նախ-
նեաց մերոց 'ի Սբյն խառնակայ պար
թեալ և 'ի մեծէն Մեսրոպայ և յա
շակերտաց նոցին թարգմանեալք. (ո-
րոց յիշատակն օրհնութեամբ եղի-
ցի ՟ր՟ գրոյն և աղօթիւք նոցա տէր
մեզ ողորմեսցի.)

Ուստի և 'ի տուփիս սիրոյ փառեալ
բազմաց 'ի մանկանց Սրբոյ եկեղեց-
ւոյս հայաստանեայց, ճեպէին գիտել
զնոյնս և առնուլ զչափ բանիցն սբյն.
որոց և հետևիլ հոգւով իբրև
բանից սրբոց Առաքելոց և Մար-
գարէից.

Այլ զի ըստ որում 'ի բազմաց անցելոց
'ի վեր ժամանակց 'ի դէպէ իւրաց և իւրա
կութեանց անհետ լինիլ կամ նո-
ւազունս գտանիլ. ըստ այսմ սարա
սի և վասն թղթոցս զօջցես զօլ
մինչ զի համարեա թէ զկնի բազում
աշխատանաց և հետամուտ զօլոյն մե

բոյ ՚ի գիւտս ամուսնական թղթոյս
՚ի Հայոց բարեխնդրողաց և խնամատարութեանց
մեծահռչակաւոր դպրի Մաշթոցի և
սարգաւագի (որ և մի էր ՚ի սրբազան
բազմն ամենայնին բանիցս. որ և ամենայն
աշխատութեամբ իւրով ՚ի գիւտս թըղ-
թոյս գրոց և եկն ՚ի լոյս ածանելոյ
հրատարակութեամբ ազգայնութեան) հաղոր-
թէ զհինգ օրինակս հինս և քանի-
րոյս միայն կարելոյ գտանել. յորոց
կարի խուզմամբ ընտրեալ հանոյք
զմաքուր սրբագրութիւն ՚ի գործոց ներ-
մուծեալս. զի էր ինչ զի երկո-
քումբք օրինակացն զերծեալ ստացեալ
ոք. և էր զի երկոցունց զերծեալ. և
էր զի միով ՚ի նոցունց հեռանալ ոք.
և այլոց ՚ի հնգից անտի ստացեալ
օրինակաց նախկինից հանոյք զմեցե-
րոցն բարեաց ստացեալ. բայց և
զամենայն հոգւոյ և զխնամարհմանս
անուանց և բայից թարգմանք բառս հետ
զոյն աշխարհաքներն. և բառս այսմ
հետևողի լուսաւորութեան պետութեան բու-

սահմոր բանից սրբոյն իգնատիոսի
Թղթոցն 13. որք են այսոքիկ. Նախ
թուղթ մի գրեալ նորին առ զմիւռ-
նացիսն առաջնորդն. Երկրորդ առ
պօղիկարպոս Սրբազան եպիսկոպոս
զմիւռնիոյ քաղաքին առաջնորդն.
Երրորդ յեփեսոս քաղաք առաջնորդ.
Չորրորդ ՚ի մագնեսիա քաղաք առաջնորդ.
Հինգերորդ ՚ի տրալլեանոս քաղաք
առաջնորդն. Վեցերորդ ՚ի Փի-
լադելփիոյ քաղաք առաջնորդն.
Եօթներորդ առ հռովմ քաղաք.
Ութերորդ յանտիոք ասորոց. Իննե-
րորդ մարիամու կնոջ միոյ ՚ի կասսա-
բլոն քաղաքէ՝ առ իգնատիոս երա-
նելի գրեալ. Տասներորդ պատաս-
խանի թղթոյն մարիամու, երանելոյն
իգնատիոսի գրեալ. Մետասանե-
րորդ ՚ի տարսոն քաղաք. Երկոտասաներորդ
առ հերոն սարկաւագ. Երեքտասա-
ներորդ ՚ի փիլիպպոս քաղաք. որք
՚ի ձեռս մեր եկին. Իսկ մնացորդք
թղթոցն նորին զորս ոչ կարացաք գը-



տա

տասնել են պատկերք. որք են Թ՟ւով
9. Ա՟, առ այն յօհաննէս առաքեալ
և աւետարանիչ. Բ՟, առ նոյնն դար
ձեալ. Գ՟, առ այն կոյս մարիամ ած՟
ածինն. Դ՟, առ եփեսացիսն երկրորդ.
Ե՟, առ մաղնիսիացիսն երկրորդ.
Զ՟, առ տրալլիանացիսն երկրորդ.
Է՟, առ Փիլադելփիացիսն երկրորդ.
Ը՟ առ զմիւռնացիսն երկրորդ.
Թ՟, առ պօղիկարպոս եպսկ՟պսն զմիւռ
նոյ երկրորդ. զի ՚ի բուն օրինակն
յունաց՝ են նորին Թուղթք, 22. Իսկ
մերս ասէն այժմ այսքան. Ոչ է
Թէ արդարև են իսկ Թուղթքս այն
իգնատեայ գրեալք ՚ի ժամանակին
յորում եղանէր նա յասորոց անտի
՚ի հռոմ ՚ի ժամանակս տրայիանոսի
ամպարշտի վկայել վ՟ն անուան տ՟ն
մերոյ յս՟ի քս՟ի. ունիմք այժմ ըզ
վկայս մեծամեծս. Նախ զայն գիր
նեսիոս՝ որ գրէ ՚ի գիրս ած՟ային
անուանց ՚ի չորս գլուխն ՚ի ժա՟ բնա
բանին յաղագս Թղթոյն որ առ հռօ

մայեցիսն 'ի ճառն ծծայնոցն տուփ-
մանց. և զի թուեցաւ ասէ ոմանց
առ 'ի մէնջ տրբազնաբանողաց' ծծ-
այնագոյն լինել զտուփմանն անուն
քան զսիրոյն. քանզի գրէ և ծծ-
այինն Իգնատիոս, եթէ իմ տուփումն
խաչեցաւ. Երկրորդ՝ զեւսեբի պամփ-
իւլացին որ գրէ յեկեղեցականն պատ-
մագրութեան իւրում 'ի յերրորդ-
դպրութեանն 'ի յերեսուն և վեց
պրակին վասն ոմանց թղթոցն սրբոյն
Իգնատիոսի յորում յայտնէ և զան-
ուանս սրբոց եպիսկոպոսացն, այս է ըզ
պօղիկարպոսի, զոնեսիմոսի, զդա-
մայի, և զպօղբոսի որք էին 'ի
ժամանակին յայնմիկ լեալք եպիսկո-
պոսք քաղաքացն զմիւռնոյ, եփեսո-
սի, մանգնիսեայ և տրալլիանոսի.
Նաև վասն հռօմայեցոց թղթոյն ըզ
յօրումս. Երրորդ՝ գրէ երանելին հայ
րապետն մեր սրբն պետրոս գետա-
դարձն 'ի կարգս մանկտեաց 'ի շա-
րակնոցին վասն հռօմայեցւոց թղ



թոյն

Թոյն այսպէս ասելով՝ որ զբաժակն անմահութեան սիրոյ քոյ արբեալ երանելին Իգնատիոս ոչ ցաւեաց մա-ոյին գազանաց մանրեալ ժանեօք հայց ոյք զատէ ձը․ Չորրորդ՝ կայս-նքի են աստուածեղինական Թուղթք սրբոյն Իգնատիոսի զոր ՚ի Լեւկուսար պա-մութիւնս սրբոյն որ ՚ի Ճառընտիր գիրքն հայոց և մասն ինչ յայսմա-ւուրսն ՚ի դեկտեմբ" ժէ․ Հինգե-րորդ կայսնի են բանքս սրբոյն Իգնատ-եայ զոր․ Նախ ՚ի Թղթոցն․ զի բա-շաղղաց Արքայական աստուածաքերոցն են բանքս և մանաւանդ սբյն պօղոսի․ որում յար և նմանք են համայնք բանք սրբյս․ պատմէ կրքն, յորդորքն խրատքն, ողջոյնքն և այլքն ամենայն․ Վեցերորդ՝ վաղեմի Թարգմանութիւնք Թղթոցս որպէս և գրեցաքն նախ յերանելի Թարգմանչացն մերոց զոր․ Եօթներորդ՝ զի ունին զԹուղթքս զայ սաւթիկ և յոյնք ընդ ձեռագրացն և շողշողեալն զորս և կոչէին գրս ոսկեա-

 ԻՀ

իշխանութեան եպիսկոպոսին՝ (որ Թարգմանիչ սրբոյն Իգնատիոսի Թղթոց) որք են Թուո՛վ ԺԲ ըստ յառաջագոյն կանխելոյն մերոյ յաւելին ի շարս Թղթոցն. եւ Թէ զերկրպագութիւն եւ եթ կարգացուք դասանել. որոց եւ սիրաշար եղեալ բարեպաշտից ամենեց եռուն ի սիրել ի զուա՛րճութեան մանկանց սրբոյ եկեղեցւո՛յ որոց եւ ըմբոշխնելն առեալ բարեպաշտօն։ ուսումնասիրացդ եւ որք սիրեսցեն զսիրեցեալն ի քանէ զերանելին ամծաւղ գեւոյն՝ ըստ գիտելոյ բարեպաշտաց ժամու եւ զայլս Թուղթս սրբոյն զնմացորդսն ի տեւողակեալս ի ձեռն ածեալ կրնդուցանելոյդ եք (ըստ յուսոյն մերոյ կամօքն այ) զտեսուկիս. Որպէս որոյ եւ արքայաւոր Թղթոցս եւ շարող բանիցս Մխսա եպիսկոպոսս բազրեամբայս եւ քննեալ միաբան Սրբ լուսաւորչին Ս. Թորոսին Լուսինեան եւ նորին իրաւ Կոստանդնուպօլսոյ. սիրով խնդրեմ ի մերո-



մս

մաքուր սիրոյ հոգւոյ փառն մնացոր
դացն ՚ի լնուլ տետրակիս. երախ-
տագէտ եղեալ նախնի հարցն մե-
րոց սրբց և երանելեաց. որք աշխատ
եղեալք Թարգմանեցին զնոյնս յու-
սումն վարժարանի սրբոյ եկեղեց-
ւոյս հայաստանեայց. որոց ունիմք
զպարտաւորութիւն ոչ զլանալ զե-
րախտիսն. այլ հատուցանել զպարտ
սըն ըստ սրբազան աւանդելոյն նորա-
տու. զի լինիցիմք արդարև որդիք
հարազատք հոգևոր հարցն մերոց
սրբց. որպէս զի և բարերար հայրն
երկնաւոր նոցին մաղթանօքն պար-
գևեսցէ մեզ զբարիս ՚ի ձեռն բա
րեգործ որդւոյն իւրոյ միածնի
պարգևօք ամենազօր սրբ հոգւոյն ճշ
մարտի. որում փառք և երկրպա-
գութիւն մշտնջենաւոր օրհ-
նաբանութեամբ այժմ և
միշտ և յաւիտեանս
յաւիտենից
Ամէն.

Յառաջաբանք երանելւոյն Ագաթանգեղոսի մեծաց գրոց Հայաստանեայց Աշխարհիս, գրեալ ըստ [illegible] [illegible] [illegible] [illegible] եւ 'ի Հռոմ 'ի [illegible] [illegible].

[illegible]

Գլուխ, Ա.

ԻՄԱՍ[illegible]

[illegible]·

Ստեղծողի Աստուածոյ Հօր, եւ միածնի որդւոյ նորա Յսի Քսի



Որ

Որ է ՚ի Զմիւռնիա Ասիացւոց, և
հանգուցեալ է ամ շնորհօք. Այլ
կատարեալ է հաւատովք և սիրով
և ոչ է պակասեալ միով իւիք ՚ի
պարգևացն Այ, և արժանի է Աս-
տուծոյ, և զգեցեալ է զսրբութի
անարատ հոգւով և բանիւ Աս-
տուծոյ՝ բազում ողջոյն.

ՓԱռաւորեմ զՅս Քս. որ
այսպէս իմաստնացոյց զձեզ.
ստուգեալ եմ վասն ձեր
եթէ հաստատեալ էք անշարժ հա-
ւատով. իբրու թէ ՚ի խաչ Տն մե-
րոյ Յսի Քսի բևեռեալ էք մարմ-
նով և հոգւով. Այլ կատարեալ էք
սիրով արեանն Քսի, և զօրացեալ
էք ՚ի Տէր մեր Յս Քս, որ եղև
՚ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ,
և է որդի Աստուծոյ բնութեամբ
և զօրութեամբ. Որ ծնեալ ճշմար-
տապէս ՚ի կուսէն Մարիամայ. և

՚Ի ցան զոյծ գնտ- թն



մկր

մկրտեցաւ ՚ի յորդանան ՚ի Յովհաննէ, զի կատարեսցի ՚ի ձեռն նորա ամենայն արդարութիւն. Եւ ճշմարտապէս բեւեռեցաւ մարմնով ՚ի Խաչին վասն մեր, յաւուրս Պոնտացւոյ Պիղատոսի և Հերովդէսի չորրորդապետի, յորմէ պտղոյ և մեք եմք. Եւ ՚ի նշանէ այնմ՝ որ արժանաւորեաց զմեզ երանութեան Ածութեանն. բարձրացուցեալ նշանի յարութեանն իւրով. Որով և սրբեաց զհաւատացեալս, եթէ ՚ի հրեից՝ և եթէ ՚ի հեթանոսաց, վասն միոյ մարմնոյ որ է եկեղեցի. Զայս ամենայն չարչարեցաւ, առ ՚ի կեցուցանել զմեզ, և ճշմարտապէս յարեաւ ՚ի մեռելոց. Եւ ոչ որպէս ոմանք ասեն՝ որք ոչն հաւատան, եթէ կարծեօք իւն չարչարեցաւ. որ ինքեանք իսկ են կարծիք և ըստ իւրեանց մտաց զէսս կեղծելի նոցա. Եւ եղիցին անմարմինք իւրեղէնս. Իսկ ես և զհետ յարութեան

[illegible]



՚ի

՚ի մարմնի գիտեմ և հաւատամ ըզ-
տէրն. Քանզի յորժամ առ Պետ-
րոսեանսն եկն՝ ասէ ցնոսա, շօշափե-
ցէք զիս և տեսէք զի ես նոյն եմ,
և ո՛չ եմ ոգի առանց մարմնոյ. Եւ
յայնժամ մերձեցան առ նա և հա-
ւատացին որք հաղորդեցանն և ճա-
շակեցին նախ զմարմին և զարիւն
նորա. վայ և արհամարհեցին զմահ.
Եւ յետ յարութեն եկեր և արբ
ընդ նոսա, և էր մարմնով և հոգ-
ւով, և միաւորեալ ընդ Հօր.

## Գլուխ, Բ.

Զայս գրեմ առ ձեզ սիրե-
լիք, քանզի գիտեմ եթէ
և դուք այսպէս հաւատայք, և կան-
խաւ զգուշացուցանեմ զձեզ ՚ի
մարդակերպ գազանաց անտի. Որ
ո՛չ միայն թէ ընդունելով չէ պարտ
ձեզ ընդունել զնոսա, այլ թէ՝
հնար ինչ իցէ, և ո՛չ հանդիպելով

հալածել նոցա, բայց միայն աղօթե-
լով աղօթել վասն նոցա, թերեւս
ապաշխարեսցեն. համարիմ թէ՝ և

այս դժուարագոյն է նոցա.

Եւ 'ի վերայ այսոցիկ՝ միայն Յսի
Քսի գո՛յ իշխանութիւն. զի նա է

ճշմարիտ կեանք մեր.

Իսկ՝ եթէ կարծեօք գործեցան այս
ամենայն 'ի մնէ, ապա և ես կար-
ծեօք եմ կապեալ. և ընդդէմ մատ-
նեցի զանձն իմ 'ի մահ, և 'ի խայտա

ռակման գազանաց հրոյ և սրոյ.

Զի որ մերձաւո՛ր է սրոյ՝ մերձա-
ւո՛ր է և աստուծոյ. և եթէ իցէ 'ի

մէջ գազանաց՝ առ Այ է.

Բայց միայն յանուն Յսի Քսի, և
վասն նմա չարչարակից լինելոյ, ամե
համբերեմ. այնու որ զօրացուցանէ՛

զիս Յս Քս Ած մեր.

Զի եթէ ոմանք յանգիտութենէ
ուրանան զնա, նոյնպէս և նա ի՛նքն
զնոսա ուրանայ. որք են 'ի կողմն
մահու առաւելեալ, քան 'ի ճշմար-

տութեանն.

Այն ո՛չ անսացին մարգարէութեան մարգարէիցն, և ոչ օրինացն մով-սէսի. այլ և ո՛չ այժմ Սրբոյ Աւե-տարանին. որք և ո՛չ ՚ի գիրս մեր հայերէն, զոր ոմանց ոմանց ուսուցա-նեմք. Նորա՝ և վասն մեր այսպէս խորհելն՝ զինչ օգուտ է ինձ, եթէ դու զիս փառաւորէ, և զտէրն իմ հայհոյէ. և ո՛չ հաւատայ եթէ մար մին զգեցաւ.

Իսկ որ այսմ ո՛չ հաւատայ՝ ուրա-ցօղ է կատարեալ, և ինքն զգեցեալ է զմահ.

Նորա՝ զանուանս անհաւատիցն ո՛չ է բարւոք ինձ գրել, քա՛ն լիցի ինձ՝ և յիշել զնոսա մինչև ապաշխարես-ցեն, և հաւատասցեն զչարչարանս փրկչին մերոյ, որ է յարութիւն մեր. Մի խաբէք, զի և երկնա-ւորք և հրեշտակացն փառք, և իշ-խանքն՝ երևելիք և աներևոյթք եթէ ո՛չ հաւատան յարիւնն Քրիստոսի՝ դա-


տա

տապարատեսցին․ որ բանականն է սա
նիլ տարցի․

Ճանաչք և սէր՝ է լուսոյն մտի, և
չիք ինչ առաւել քան զնոսա։

Անմիտ առնէք և զոյս օտար են մեզ ի շնորհացն Աստուծոյ, որ եհաս առ մեզ. Թէ որպէս են հակառակ կամացն Աստուծոյ և սիրոյ նորա։ Այլ ոչ ունին հաղորդութիւն որբոց և այրեաց, նեղելոց և կարօտելոց, քաղցելոց և ծարաւելոց. և հեռացեալ են ի գոհութենէ և յաղօթից. զի ոչ ճանաչեն զգոհութեանն, որ է մարմնին և արեան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ չարչարեցաւ փոխանակ մեղաց մերոց, զոր յաւուրց Հայր քաղցրութեամբ իւրով։ Իսկ որք ընդդէմ են պարգևացն Աստուծոյ, ի քննելն իւրեանց մեռանելցին. Բարեգործ եր նոցա սիրել զչարչարանս նորա և կեալ։

Արժանի է ձեզ հեռանալ յայնպիսեացն, և ոչ բանիւք անգամ խօսել

և յո ղոգո ոտը դի ոչ է փոցի նոցա

ընդ նոսա առաջի ժողովրդեանն ·
Նայեցարուք ՚ի մարգարէսն · Եւ ա
ռեալ Աւետարանին յորս Ձայնի
փրկութեանն մեր . և կատարէ զյա
րութիւն մեր ·
Այլ յերկմտութէ փախերուք որ
պէս ՚ի գլխոյ չարեաց ·

## Գլուխ, Գ ·

ԱՄԵՆեքեան Եպիսկոպոսի հը
նազանդ լերուք որպէս
Յ͠սի Ք͠սի և Հօր Ա͠յ · և
քահանայից իբրև առաքելոց Ք͠սի ·
և ՚ի սարկաւագաց պատկառեցէք իբ
րև ՚ի հրամանէ Ա͠յ ·
Այլ մի ոք գործիցէ ինչ առանց ե
պիսկոպոսի յեկեղեցական գործոյ ·
Ճշմարիտ պատարագ համարեսցի՝ որ
ինչ յեպիսկոպոսէն գործիցի · կամ
յայնմանէ՝ որ ՚ի նմանէ գործել
հրամայի ·
Ուր և երևի եպիսկոպոսն՝ անդ և
ըլիցի ա͠մ ժողովն · որպէս թէ ուր



իցէ

իցէ Յ՟ս Ք՟ս, անդ իցէ Կաթուղիկէ
եկեղեցի։

Չիք իշխանութիւն առանց եպիսկոպոսի ումեք, ոչ մկրտել զոք, և ոչ առնել հանդիսա. բայց զոր ինչ նա քննեսցէ՝ այն է հաճոյ Աստուծոյ. զի լինիցի ճշմարիտ և հաստատուն, զոր ինչ և գործիցէք։

Արդ՝ պատշաճ է արթուն կալ, մինչ գոյ ժամանակ ապաշխարութեան։

Բարւոք է ճանաչել զԱ՟Ծ և զեպիսկոպոս. և որ պատուէ զեպիսկոպոս՝ պատուի ՚ի յԱստուծոյ. և որ գործէ ինչ և ծածկէ յեպիսկոպոսէ՝ ծառայ է նա սատանայի։

Ամենայն ինչ ձեր շնորհօք առաւելուցու, որպէս և արժանի էք. զի յամենայնի հանգուցէք զիս, և զձեզ հանգուսցէ Յ՟ս Ք՟ս. զի ՚ի մերձենալս իմ առ ձեզ. և ՚ի հեռանալս իմ ՚ի ձէնջ՝ սիրեցիք զիս։

Փրկեսցէ զձեզ Ա՟Ծ՝ զի արժանի լինիցիք այնմ, վասնորոյ զամենայն ինչ



համ

Համբերեք.

Ո՛ Փիլոնն և Ռագրիոսն և Զարթա-
փոփն որք կցորդք եղէն ինձ ՚ի Քս,
բարւոք արարիք, զի ընկալայք իբրև
զպաշտօնեայս Աստուծոյ, և նոքին
իսկ գոհանամ առ Տր վն ձեր, զի
հանգուցիք զնս ամ իրօք. Ձեզ ինչ
ոչ կորնչի. Հոգիս իմ եղիցի փոխա-
նակ անձանց ձերոց. և զկապանս իմ
զոր ոչ արհամարհեցիք, և ոչ ամօթ
համարեցարուք. և ոչ զձեզ յամօթ
համարի՝ կատարեալ յոյսն իմ Յս
Քս. Աղօթք ձեր եհաս ՚ի յանտիոք
ասորւոց, վն զի անտի կապեալ եմ
կապանօք, որ հաճոյ են Այ.

Ողջոյն տամ ամենեցունց. և ոչ եմ
արժանի կոչել ՚ի նոցանէ, զի նուա-
ստ եմ քան զամենայն մարդ.

Արդ՝ կամօք իմ արժանաւորեցայ
ոչ ՚ի մտաց, այլ ՚ի շնորհացն Այ. զոր
աղօթեմ զի լիութբ տացի ինձ. և
աղօթիւք ձեր արժանաւորեցայց Այ.
Յաղեսցին կամք ձեր կատարեալ յերկրի



և

եւ յերկինս.

Վայելուչ է ձեզ ընտրել յեկեղեց-
ւոյ ձերում կարապետս' առ 'ի յեր-
թալ յատուրս եւ ուրախանալ ը̃նդ նոսա
յողջոյնս հարսանեաց. զի ընծայեան զմե-
ծութիւնս հարսանեաց, եւ տուեալ նմ̃
կատարումն անձանց հարսանեաց.

Այլ տեսանեմ ես գործ մի հաճոյ ա̃յ
ո̃չ զի առաքիցէք զմի ոք 'ի ձէնջ հան-
դերձ թղթով ձերով, զի փառաւոր
առնիցէ զԱ̃ծ ը̃նդ նոսին, վ̃ս անդոր-
րութեան օրոյն' որ եղեւ նմ̃, եւ հա-
սին 'ի նաւահանգիստ աղօթիւք ձեր.
Քանզի կատարեալ էք, եւ զկատար-
եալն խորհիք եւ կամիք զբարին գոր-
ծել, զոր Ա̃ծ պատրաստ է 'ի տալ.

Ողջոյն տայէ ձեզ սէր եղբարց որ
են 'ի գրկիս. վասն զի անուն գրեցի
առ ձեզ' 'ի ձեռն բիւրդիոսի, զոր
առաքեցից ը̃ եղբարս ձեր Յովսէփա-
ցիս. որ եւ ինքն իսկ բիւրդիոս յանձն
հանգոյց զիս.

Լաւ էր թէ ա̃մ մարդ նմանէր նմա.

վ̃ս զի նա ինքն նման է սուրբ պաշ-
տօնէի ա̃յ. տացի նմա շնորհս յա̃մի.
Ողջոյն տամ եպիսկոպոսին ձերում,
որ արժանի է ա̃յ. և քահանայից
ձերոց և սարկաւագաց կարգակցաց
իմոց՝ որք են հաճոյք ա̃յ.
Ողջոյն տացուք միաբանից ամենեցունց
յանուն տ̃ն մերոյ Յ̃սի Ք̃սի. և մարմ-
նով ն̃ր և չարչարանօք. և արեամբ և
յարութեամբն. և միաբանով և հոգ-
ւով միաւորութ̃բ ա̃յ և ձեր.
Շնորհք ը̃ ձեզ և ողջոյն և համ-
բերութիւն յա̃մ ժամ.
Ողջոյն տամ ձեզ փիլիմոն որ է ըն-
դիս. Ողջոյն տամ տանց և եղբարց
ձերոց հանդերձ կանամբք և որդ-
ւովք նոցա, և կուսանաց՝ որք կոչին
այրիք. ո՛ղջ լերո՛ւք զօրութեամբ
Հօր. Ողջոյն տամ աղակայ սիրելւոյ
իմոյ, և դաւիթնոսի ընտրելոյ, և դա-
փնոսի, և ա̃մ մարդոյ ը̃ անուան
եւրոյ.
Ողջոյն տամ տանն գաւիա, և աղա-

 թեմ

Թեմ վասն նորա, զի հաստատեսցի հաւատով եւ սիրով ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ․
Ողջ լերուք շնորհիւն այ Ամէն․

Առ Պօղիկարպոս եպիսկոպոսն զմիւռնացւոց թուղթն․

Գլուխ Ա․

ԻԳՆԱՏԻՈՍ ՈՐ Ե ԱԾԱԶԳԵԱՑ Պօղիկարպոսի Եպիսկոպոսի Եկեղեցւոյ զմիւռնեայց քաղաքին, յԱծ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յսէ Քսէ



Քսէ

Քանէ բազում ողջոյն.

Վ̃ զի ծնուներ'է առ իս միայն քո, որ հաստատեալ է ՚ի Ա̃Ծ, երբև յանշարժ վէմ.

Որչափ առաւել փառաբանեմ զԱ̃Ծ, զի արժանի եղէ պատկերի քում՝ որում Աստուծով փափաքէի.

Արդ՝ խնդրեմ ՚ի քէն շնորհօքն զոր ըղձեցեալս եմ առաւելուլ զը̃նթացս քոց գնացից, և խնդրել վ̃ որդւոց մարդկան՝ զի կեցցեն.

Եւ արդ՝ հայցեմ զպաշտամանս, ջա-նիւ՝ մարմնով և հոգւով. և կալջիր զհոգաբարձութիւն վ̃ միաբանութ̃ե.

Վ̃ զի չիք ինչ առաւել քան զնա.

Բարձ ՚ի քեզ զմ̃մ մարդ, որպէս և ըզքեզ բարձեալ է տէր մեր Յ̃ Ք̃.

Երկայնամի՛տ լեր առ ամենեսեան սիրով, որպէս և առնեւաց ինձ.

Աղօթից ստէպ կաց և խնդրեա զըզ-գօնութիւն առաւել քան զոր ու-նիմ. արթուն կաց որպէս և ես.

 ան

անքուն ոգի ստացեալ.

Ընդ ամ մարդոյ՝ ըստ կամացն Այ խօսեսջիր. զանկարութիւն ամ մարդոյ բարձ իբրև զայր կատարեալ. ուր բազում է աշխատութիւն, բազում է և օգուտն.

Եթէ զբարիսն միայն աշակերտեալ սիրես՝ ոչ շնորհ է քեզ. այլ առաւել զչարսն հնազանդեցո հեզութեամբ.

Ոչ եթէ ամ վէրք միով դեղով բժշկին. այլ զհատեալսն կակղուցէք հանգո. Լեր իմաստուն իբրև օձ յամ իրս, և որոց արժանի են՝ անբիծ իբրև զաղաւնի.

Վն այսորիկ՝ ես դու մարմնաւոր և հոգևոր. զի զորս և երևեսցին առաջի երեսաց քոց՝ շահեսցես.

Իսկ զորս ի ծածուկս են՝ խնդրեա, և յայտնեսցին քեզ. և ոչ միով իւիք պակասեալ գտանիցիս, այլ և յամ պարգևս առաւելուսցիս.

Խնդրեա դու քեզ ի ժամանակի իբրև



նաւա

իմաստուն նաւավար զհողմ․ և երբեմ զալեկոծեալ՝ զնաւահանգիստ․ ոչ
զի արժանի լիցիս այ․

Արթուն կաց երբեք զքայլ զլեզուն որ Տանի․ վա՟ զի զոր ինչ խօսացեալն է մեզ, կեանք են յաւիտենից, որ ոչ անցանեն․ զոր դու ինձ
աստուածին գիտես․

Յամի անձն իմ եղիցի փոխանակ անձին քում․ և կապանք իմ զոր սիրեցեր․ Իսկ՝ այնոքիկ որք համարին եթե իցեն ինչ, և ուսուցանեն օտար ուսմունս, մի՛ զարմանար ը՟ նոսա․ այլ կացջի՛ր ՚ի ճշմարտութեն՝ երբեմ զայր հզօր որ հարկանի՝ և ոչ անկանի․ քանզի՛ հզօրին է հարուածել
և յաղթել․

Յուս առաւել վա՟ այ զամ ինչ պա՛րտ է մեզ կրել՝ և համբերել․ զի և նա
համբերեաց վա՟ մեր․

Փութացո՛ղ լեր առաւել քան զոր եւս․ և ՚ի մի՛տ առ զժամանակն, և
զոր ՚ի վերին է քան զժամանակս․

 Յու

Այժմ անձն կայ այնմ՝ որ ոչ ունի զժա
մանակս.

Անտեսանելին՝ որ վասն մեր տեսաւ. անշօշափելին եւ անչարչարելին, որ վասն մեր չարչարեցաւ, եւ զամենայն ինչ ամենայն վասն մեր կրեաց.

## Պատուէր Ի.

Օտարիս մի արհամարհեսցես՝ այլ դու ինքնին հոգասցես զնոսա. Այժմ մի ինչ գործեսցի առանց քո կամացդ, եւ ոչ դու գործեսցես ինչ՝ առանց նոցա կամացն, որպէս եւ չես իսկ գործեալ.

Այլ քարոզք կոյց՝ եւ հանապազ ծա զօղեալ զեկեղեցի, եւ զամենայն մարդկան ուսանէ կոչեա. զծառայս եւ զաղախնեայս ուսուցեալ մի արհամարհել ըզ տէարս.

Նոյնպէս նոքա մի արհամարհեսցեն զնոսա. այլ՝ որպէս փառաց Տեառն ծառայեսցեն՝ զի արժանի լինիցին առա



ւել

ունել ազատութիւն գտանել յոյս.
Ո՛հ սիրեսցեն ազատե՛լ ՚ի հասարակաց
ծառայութենէն, զի մի՛ գտանիցին
ծառայք ցանկութեանց.

Զչար խորամանկութեց փախիր.
Իմս անէծել խօսեսջի՛ր ը՛ քորդ-
ևմ ձեռն այլոցիկ և առաջես նոցա
սիրել զՏէր, և բաժանին է նոցա
՚ի գործս իւրեանց մարմնով և հոգ-
ւով. Որպէս և եղբարց իմոց պա-
հերեա՛լ յանուն առաւել մերոց Յի-
սուսի, սիրել զկանայս իւրեանց,
Իբրև Տէր մեր զեկեղեցի իւր.
Իսկ եթէ ոք ժուժկալութիւն ու-
նիցի, և կարող է կալ սրբութե՛ ՚ի
պատիւ մարմնոյ տն, կացցէ և մի
պարծեսցի. իսկ եթէ ոք պարծես-
ցի կորիցէ. և եթէ գտանիցի ոք
առանց եպիսկոպոսի ամուսնասցի.
Պատշաճ է այրանց և կանանց ամու-
նացելոց՝ հրամանաւ եպիսկոպոսի
ամուսնանալ, զի եղիցի ամուսնու-
թիւնն ՚ի Տէր. և ոչ ցանկութեամբ,

 ամ

ամենայն ՚ի միտս մեզ եղիցի.

Լուսեցարուք յերկնայինս, զի Տէր ՚ի ձեզ նայեսցի. անձն իմ փոխանակ անձանց ձերոց.

Եթէ հնազանդիք եպիսկոպոսի և քահանայից և սարկաւագաց. եղիցի իմ մասն ը̅ ձեզ առ Տէր.

Ընդ միմեանս վաստակեցէք, և ը̅ միմեանս չարչարեցարուք, և ննջեցէք և զարթիջիք ընդ միմեանս՝ իբրև տն- տեսք ա̅յ և ընտանիք և սպասաւորք նր̅. Հաճոյ լերուք և ծառայեցէք նմա. զի ընկալջիք ՚ի նմանէ պարգևս, և մի ոք ապստամբ գտցի.

Մ̃ն կացցէ ՚ի ձեզ հաւատն իբրև զէն, և յոյսն իբրև զսաղաւարտ, և սէրն իբրև զնիզակ, և համբերութիւն իբրև զվահան. Աւանդք եղիցին ձեր՝ բարի գործք ձեր, զի ընկալջիք պարգևս յոյժ. Երկայնամիտ լերուք միմեանց հեզութբ̅, որպ̅ թէ Տէր իցէ ՚ի միջի ձերում, և ես ուրախ եմ ՚ի ձեզ յամ̅ ժամ.



Մ̃ն

Այլ զի՛ եկեղեցւոյն Անտիոքայ Ա-
սորւոց հանդարտեալ է՛ աղօթիւք
ձեր. ոպ՟ եւ գրեցին առիս. եւ ես
խաղաղութե՟ամբ եմ յուսոյն Ա.Յ. ա-
ղօթիւք ձեր եւ աշակերտ ձեր գտա-
նիմ. Բարւոք է ո՛վ երանելիդ Պօ-
ղիկարպէ՛ ժողովել խորհրդով զխոր-
հրդակիցս արժանիս այ՟, եւ ընտրել
զորս յոյժ սիրելի է ձեզ, որս առա-
քինիս, որք կարող են լինել կարա-
պետ այ՟, եւ առաքել յասորիս, ոպ՟
զի փառաւորեսցեն զսէր ձեր.
Մարդ քրիստոնէի չի՛ք իշխանութի՟
անձին իւրում, այլ պատրաստէ այ՟.
Եւ այս գործ է այ՟ եւ ձեր, յորժամ
կատարիցէք զսա.
Ես հաւատամ շնորհացն այ՟, եթէ
պատրաստ էք գործոյն այ՟. զի եւ գի-
տեմ զպատրաստութի՟ն ճշմարտու-
թեան ձերում.
Զայս գիրս խնդրեմ ՚ի ձէնջ. զի
ա՟մ եկեղեցեաց ո՛չ հանդուրժեցի
գրել, զի յանկարծակի մեկնեցայ ՚ի
Տ


գրէ

գրեալ է ՚ի նիկիաքոչիս.

Սամփսոն դու էիր և այր որ սնուցեալ է զմիտս այ՝ գրեալ յեկեղեցիս որ ՚ի մէջ են քան զմեզ, սպ զի և նոքա զնոյն գործեսցեն.

Այլ առաքեսցեն առս որք կարողքն իցեն հանդերձ թղթովք ձերովք. զի փառաւորեսցէք ՚ի գործս յաւետենից այպ և արժանի էք.

Ողջոյն տամ ամ մէջ ՀԲ անուանելոց րուսմ. և կնոջ Սոփրոնիայ և ամ տան նորա՝ և որդւոց նորա.

Ողջոյն տամ Ակելլեայ սիրելւոյ իմոյ. Ողջոյն տամ այնմ եղբօր որ պատրաստեալ է երթալ ՚ի Սորիս. և եղիցի ընդ նմա շնորհք այմ, և ընդ պօղիկարպոսի որ առաքեն զնա.

Աղօթեմ՝ զի ողջամբ լինիջիք յամ ժամ ՚ի ՏՐն ՅՍ ՔՍ մեր յորում կայցէք միաբանութբ ընդ այ և ընդ եպիսկոպոսի.

Ողջոյն տամ ազնուիս սիրելւոյ իմոյ. Շնորհք ընդ անձանց ձեր Ամէն.

Առ Եփեսացիսն.

Գլուխ. Ա.

ԼԳՆԱ

ՏԻՄՍ ՈՐԻ, ԱՃՐ. Օ ԳԻՐՑ,
Եկեղեցւոյդ օրհնելոյ մեծութիւն
Ա.Ճ Հօր կատարմամբն.
Որ է յԵփեսոս ախացւոց, որ է
օրհնեալ յՈՒՆ լինել հանապազ մնա_
ցական և անփոփոխելի փառօք.
Որ կատարեալ է ճշմարիտ չարչարա_
նօքն ամ և ամն մեռոյ Յսի Քսի, որ
արժանի է երանութեան անպարտ խորհ_

 դա

դուլթէ Ի Ք͞ս Յ͞ս բազում ողջոյն.
Քանզի ընդունելի է առ իս ողջոյնն
ձեր Ա͞յ, և յոյժ սիրելի՛ զոր ըն-
տացեալ էք արդարև անբիծ կամօք
հաւատով և սիրով Յ͞սի Ք͞սի փրկ-
չին մերոյ. և էք նմանօղք Ա͞յ.

Զի զգործս ձեր կատարեցէք սի-
րով. յորժամ լուայք եթէ կապեալ
եմ յասորիս վ͞ս անուան համօրէն
հասարակաց յուսոյն, և այն ունիմ
աղօթիւք ձերովք գազանակուր լի-
նել ի Հռոմ.

Զի յորժամ այսմ արժանաւորիմ և
ժուժկալեմ, յոյս ունիմ լինել աշա-
կերտ Ա͞յ, և դուք ջանացէք հանդու-
ցանել զիս.

Արդ զբազմութիւն ձեր ընկալայ ի
ձեռն Ոնեսիմոսի եպիսկոպոսի ձե-
րում, որ է առաւելեալ անպատմելի
սիրով. Զոր աղաչեմ Յ͞սիւ Ք͞սիւ
սիրել ձեզ զնա. և ամենեքին դուք
նմանեցէք նմա.

Օրհնեալ է Ա͞ծ որ ետ ձեզ այդ-



պիսի

պիսի եպիսկոպոս Տ͞ր արժանեաց ձե-
րոց։ Այլ վ͞ս ընուրդոսն խորհրդակ-
ցի իմոյ. որ ա͞լ պաշտօնեայ է ձեր,
եւ է ա͞ծ օրհնեալ այր. կամիմ զնա
յանձն առնել ձեզ, առ ՚ի պատուէ
եպիսկոպոսին ձերում եւ ձեզ։
Այլ զՍարկոս որ է արժանի ա͞յ եւ
ձեզ, Տ͞ր նմանութե͞ն սիրոյ ձերում
ընկալցիք զնա, եւ յա͞մ հանգոյց զնա.
Նոյնպէս եւ զնա հանգուսցէ Հայր
Տ͞ն մերոյ Յ͞սի Ք͞սի, հանդերձ
ողորմութբէ եւ կենդանարարութբէ եւ
ն͞է փառթբէ եւ փրկագործութբէ.
Ողջ ՚ի ձեռն նշ͞ զձեզ զամենեսին
զսիրելիս իմ առեալ, եւ ուրախ եմ
՚ի ձեզ յա͞մ ժամ եթէ արժանի ե-
ցեմ. Խաղաղ է ձեզ յա͞մ ժամ հան-
դուցանել զՅ͞ս Ք͞ս. որ փառաւո-
րեաց զձեզ կարապետեալս լինել
յա͞մ հնազանդութիւնս.

## Գլուխ Բ.

Արդ հնազանդ լերուք Ե-
պիսկոպոսի և քահանայից,
զի յամենայնի սուրբ եղիջիք.

Ոչ եթէ ես իցեմ ինչ որ հրամայե-
ցեմ ինչ ձեզ, զի ես թէպէտ և կա-
պեալ վասն ճշմարտութեան անուանն
լինիմ, բայց տակաւին ոչ եմ կատա-
րեալ ՚ի Յիսուս Քրիստոս.

Այժմ սկսայ աշակերտ լինել, և խօ-
սիմ ընդ ձեզ իբրև ընդ ուսումնակիցս
իմ. Ինձ էր պատշաճ ընդունել ՚ի
ձէնջ զհաւատս, և զհամբերութիւն
և զխրատս և զերկայնմտութիւն, բայց
սէրն ոչ թողու զիս լռել վասն ձեր.
՚ի փութալ ձեզ ՚ի կամս Աստուծոյ, որպէս և
ինքն Յիսուս Քրիստոս որ է ճշմարիտ կեանքն
մեր՝ ՚ի կամս հօր.

Այլ և եպիսկոպոսք որ յամենայն տեղիս
ընտրեցան՝ ՚ի Յիսուսի Քրիստոսի կամսն են.
Արդ և ձեզ վայելէ փութալ ՚ի բա-
րի կամս եպիսկոպոսաց, որ և գործէքդ

խոկ. Այսպէս և քահանայք ձեր,
որք արժանի են անուանն իւրեանց՝ և
Աստուծոյ, միաբանեալ ընդ եպիսկոպոսին իբրև զաղիս
քնարի.

Սով զի միաւորութեամբ ձերով միասա-
բանի միաբանութեան սիրոյ ձերոյ ՚ի
Քրիստոս Յիսուս.

Արդ՝ իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ միա-
բան կացէք, զի յորժամ լինիցիք միա-
միտք՝ ընկալջիք զնմանութիւն Աստուծոյ.

Լաւ է միաբան երգեսջիք ՚ի մի ձայն
հօր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի լուի-
ցէ ձեզ, և ծանիցէ զձեզ ՚ի բարւոք
վաստակս ձեր.

Լաւ է զի էք դուք անդամք որդւոյ
նորա, պարտ է ձեզ անբիծ միաբանութեամբ
հաղորդել ընդ Աստուծոյ.

Իսկ եթէ ես փոքր ժամանակաւ
այսպիսի միաւորութիւն ունիմ ընդ եպիսկոպոսին
ձերում, ոչ մարմնաւոր, այլ հոգե-
ւոր. որչափ ևս առաւել երանի
տամ ձեզ որ խառնեալ էք ընդ նմա որպէս
եկեղեցի ընդ Յիսուսի Քրիստոսի. և որպէս Յիսուս

Կամն է հօր․ զի ամ ինչ միաբանութե
եղիցի․
Մի՛ ոք խաբեսցէ զանձն իւր․ զի
թէ ոք ոչ լինիցի ՚ի խորանին՝ մեր
ժեալ է ՚ի հացէն․
Իսկ եթէ աղօթք միոյ և երկուց՝
այսպիսի զօրութիւն ունի, որչափ ևս
առաւել եպսի և ամ Եկեղցւոյ․
Արդ՝ որ ոչ գայցէ ՚ի միաբանութիւն,
նա հպարտացեալ է մտօք իւրովք․
քանզի գրեալ իսկ է, թէ՝ Տէր ար
համարհէ զամբարտաւանս․
Փութասցուք մի՛ լինել հակառակ
եպսի․ զի լինիցիմք հնազանդք այ․
Այլ յորժամ տեսանեմք զեպսն լռել
ևս առաւել պարտ է երկնչել ՚ի նմա
նէ․ Զի զոր ոք և առաքեսցէ այր
տանուտէր ՚ի պէտս իւր, պարտ է ըն
ունել զնա իբրև զառաքիչն իւր․
Ապա պատշաճ է մեզ նայել յեպս
իբրև ՚ի տէր մեր․

# Գլուխ Գ.

Սա ասէ՝ ինքն Անեսիմոսս ա-
ռաքեալ փառաբանէ զյաղթ-
ութիւն ձեր ՚ի Տէր.

Ով իմ անձինք ճշմարտութեան կենդանիք էք,
և չհեռացեալ խօսս ՚ի ձեզ ոչ լինի-
էք. և ոչ լսիցէք ումեք, եթէ ոչ
ճշմարտութեամբ վասն Յիսուսի Քրիստոսի խօսես-
ցի ընդ ձեզ.

Սոքա զի աստուածութիւն է ամենից չարաց՝
զբարեաց զգենուլ զանուն և զկեր-
պարան. և արդեամբ գործեն զչար-
ծրս անպիտանս իմ.

Պարտ է ձեզ յամենայնեացն ՚ի բաց
կալ խորհրդոց ՚ի դժնեաց գազանաց.

Քանզի նոքա են շունք կատաղեալք
և գաղտագողք որոց վէրք ծանեաց
դժուարաբուժելի է ՚ի բժշկութիւն.

Այն է բժիշկ հոգւոց և մարմնոց.
անտեսանելին և տեսանելին Աստուած և որ-
դին մարդոյ.

Այնմ որ մարմնացաւ ՚ի մերոյ քան

զբանս եղականաց ճշմարիտ կեանքն
և ի մահուն կենդանի, և ի Մարիա_
մայ և ի Հօրէ որ չարչարեցաւ վ՟ն
մեր Յ՟ս Ք՟ս տ՟ր մեր.

Ապա՝ մի ոք խաբեսցէ զձեզ, որ և
ոչ էք խաբեալ, զի ամենեքին դուք
ա՟յ էք.

Որչափ ոչ է ընկեալ ի ձեզ մի ինչ
ի ցանկութեանց չ՟րի. որ կարօղ են տան_
ջել զձեզ, աշխատալից ա՟ռ կեայք.
և ես սուրբ եմ ի ձեզ. և հայցեմ
վ՟ն ձեր ո՟վ եփեսացիք.

Ժողովուրդք՝ որ են յա՟մ հեթա_
նոսս. որք մարմնաւորքն են՝ զհո_
գևորս ոչ կարեն գործել. և ոչ
հոգևորքն՝ զմարմնաւորս.

Ո՟չ և ոչ հաւատացեալք զգործս ան
հաւատից, և ոչ որք օտարք են ի հա
ւատոյ զգործս հաւատացելոց.

Բայց դուք՝ և ի մարմնաւորս զհո_
գևորն գործէք. քանզի զա՟մ ինչ
ի Ք՟ս Յ՟ս կատարէք.

Ծանեայ եթէ անցին ոմանք առ



ձեզ

ձեզ, որք ունէին ուսմունս չարս, և ո՛չ թողէք զնս̃ սերմանել ՚ի ձեզ զչար սերմանիսն. այլ խցէք զունկն ձեր, և ոչ ընկալարուք զչար բանս նց̃. Ցանկալի էք դուք վէմք տաճարի հօր ձերոյ այ̃, պատրաստեալք ՚ի շինուածս տաճարի հոգևորի. որ վերանայք ՚ի բարձունս մերձենայիւք խաչին.

Այժ է կաղմիչ ձեր հաւատքն, և ճանապարհ՝ սէր ձեր, որ հանէ ՚ի բարձունս առ ա̃ծ.

Այժ ՚ի մի ճանապարհ ընթանայք ամենեքին, և զգեցեալ էք զա̃ծ, և ըզ սրբութի̃ն նր̃. և ամենևին զարդարեալ էք յա̃մ հրամանս Յ̃ի Ք̃ի.

## Գլուխ Գ.

Ցնծամ՝ զի արժանի եղէ խօսել ը̃ ձեզ. և ուրախ եմ յորում գրեցի առ ձեզ. վ̃ս զի զայլ ոք ոչ սիրէք բայց զայն

ոգք, որ ա̅ծ կեայ.

Այլ մի՛ այլոց ՚ի մարդկանէ աղօթե-
ցէք դառնալ առ ա̅ծ. զի գոյ ն̅ց
յոյս ապաշխարութե̅.

Աղաչեցէք զնա, զի ՚ի գործս ձեր
աշակերտեսցին ձեզ.

Այլ ը̅դեմ մեծամեծ բանից նոցա
խոնարհութե̅ կացէք, և ընդդեմ
հերձուածոյ ն̅ց աղօթեցէք, և ընդ-
դեմ մոլորութե̅ նոցա՝ դուք հաստա-
տուն կացէք ՚ի հաւատս. և ը̅դեմ
անմտութե̅ ն̅ց դուք հանդարտ կա-
ցէք, և մի՛ ջանայցէք նմանիլ նոցա.

Ալ հեզութե̅ կացէք, և նմանօղք
ա̅յ փութացարուք լինել. ո̅վ զի մի
զտանիցի ՚ի ձեզ արմատ չարին. այլ
զի կայցէք ա̅մ մաքրութե̅, և ամօթ
խածութե̅ ՚ի Ք̅ս Յ̅ս, մարմնով և
հոգւով.

Ժամանակքն են վերջինք, պատկա-
ռեցարուք յերկայնմտութե̅ն ա̅յ. զի
մի՛ լինիցի ձեզ այն ՚ի դատաստան.

Երկիցուք երկեաւք ՚ի հանդերձելա-

 բար

բարկութենէն եւ կամ սիրեսցուք զշ-
նորհս՝ զոր ունիմք յայսմ աշխարհի։ Մի-
այն ի Քրիստոս Յիսուս գտանիցիմք ճշմա-
րիտ կենօք։

Մի՛ լիցի ձեզ այլ ինչ հաճոյ, բայց
ի նմանէ, յիշեա որոյ եւ ես նորին յա-
սալ կապեալ շրջիմ։ որ են կա-
պանք՝ այլ մարգարիտք հոգեւոյն, զոր
նորոգ տացէ ինձ Աստուած յառնել ի մե-
ռելոց։

Չը՛ աղօթիւք ձեր եղիցի ինձ, զի
հանապազ հաղորդ քրիստոնէից եփե-
սացւոց գտանիցիմ։ որք ընդ առա-
քեալսն էին յամ ժամ զօրութեամբ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Գիտեմ թէ ո՛վ եմ, կամ ո՛ւմ գը-
րեմ, ես՝ դատապարտ՝ եւ ի վերայ ձեր
ողորմութիւն եղեւ։ ես ընդ տագնա-
պաւ՝ եւ դուք հաստատեալք։

Առ ձեզ ճանապարհորդքն որք վասն
Աստուծոյ նահատակին։

Դուք էք խորհրդակիցք սրբոյն Պօ-
ղոսի, որ ունի վերանութեանցն վկայ


ութի

ութի. որում տայց ինձ Տէր զաւա-
նել յիներգոյ պատուհանդանի ուրից
նոր, յորժամ զատանիցիմ այս.
Նոյն յամ̃ թուղթս իմ միշեմ զձեզ
ի Տր̃ Յս̃ Քս̃.

## Գլուխ Ե.

Ստէպ կացէք յամ̃ ժամ ժո-
ղովել ձեզ ի գոհութիւն և
ի փառս. քանզի ի ձեռն միաբա-
նութեամբ և ի հաւատոյդ տկարանայ
զօրութիւնք սատանայի, և եղծանի՛ յի
շատակ նորա.

Զի ոչ ինչ առաւել քան զհաւատ՝ և
զխաղաղութիւն. որով խափանին ամ̃
պատերազմունք երկնաւորաց և երկ
րաւորաց. որոց չէք ինչ մոռացեալ
ի ձէնջ, եթէ ունիցիք կատարելա-
պէս ի ձեզ զՅս̃ Քս̃.

Հաւատք և սէր են սկիզբն և կա-
տարումն. հաւատք սկիզբն և սէր
կատարումն.

Նա՛ յորժամ երկոքին սոքա լինին ի միասին, անդ է և Ա՛ծ, և այլ ամ բարի գործք և առաքինութիւնք.

Չի՞ք ոք՝ որ խոստանայ ունիլ հաւատս և մերձանիցէ. և ոչ որ ըստաղեալ է սէր՝ և ատեայ. մի զի ծառն ի պտղոյ անտի իւրոյ ճանաչի. այսպէս՝ և որք խոստանան Քի լինել՝ ի գործոց իւրեանց ճանաչին.

Ո՛չ է բարւոք խոստանալ ունել գործս միայն՝ առանց արդեանց, և զօրութեան հաւատոց մինչև ի կատարումն. Բարւոք է եթէ իցէ ինչ ոք՝ և լռեսցէ, քան եթէ ոչ ինչ իցէ՝ և խօսեսցի.

Բարւոք է ուսուցանել զայն ինչ՝ զոր և գործիցէ նախ ինքն, և ապա ասիցէ.

Մի է ուսուցիչն որ ասաց՝ և եղև, և լռութեամբ գործէ զարմանալիս Հօր իւրոյ.

Ճշմարիտ զօրաւոր է, որ ստացեալ է զբանն Յիսուսի, և ունիցի զնա հեզու-

 թե

թէ նր̃, լինել կատարեալ, զի որով
խօսեսցի՛ գործեսցէ, և որով լը-
ռեսցէ՝ ծանիցէ։

Չիք ինչ մոռացեալ 'ի Տ̃նէ, այլ և
ծածուկք մեր յայտնի են նմա։

Ջ̃ամ ինչ այսպ̃ս գործեսցուք, իբ-
րու թէ 'ի մեզ իցէ բնակեալ նա։
ո̃պ զի եղիցուք տաճար նր̃, և նա ե-
ղիցի մեր Ա̃Ծ, եթէ արդարութ̃
սիրիցեմք զնա։

Մի խաբիք եղբարք, որք սիրեն
զինչս՝ զարքայութ̃ին Ա̃յ ոչ ժառան-
գեն։

Իսկ եթէ որք զայսոսիկ գործեն
մեռանին, ո՛րչափ ևս առաւել՝ որք
չար ուսմամբ զհաւատն Ա̃յ ապակա-
նեն։ Վ̃յ ո̃րն փառաց Ո̃Յ Ք̃Ի
խաչեցաւ։

Բայց որ զայսոսիկ ուրանայ՝ յան-
շէջ հուրն առաքի՛, նա՛ և լսօղ նր̃։
Վ̃ասնորիկ զիւղն անոյշ ընկալաւ
տ̃րն մեր 'ի վ̃ր գլխոյ իւրում, զի
յանապականն հոտ անուշից ածցէ զե-

 կեղե

կեղեցի իւր.

Արդ՝ մի՛ օծանիք ՚ի ձեռս զհրով չարութեն իշխանին Տէր այսորիկ, զի մի՛ որոշեսցէ զձեզ ՚ի խնամատացեալ կենացն.

Այս այնորիկ զգիտութիւն այս ընկալայք՝ որ է Յսի Քսի.

Այս ընդդէր կործանիմք յիմարաբար և վի ոչ պարտաւորիմք ՚ի շնորհացն եթէ հաւատամք եթէ ճշմարտապէս չարչարեցաւ Քս Յս մեր.

Արկերայագանեւ հոգիս իմ խաչին, որ է գայթակղութիւն անհաւատից. մեզ ձեզ հաւատացելոցդ փրկութիւն և կեանք յաւիտենականք.

Ո՞ւր է իմաստունն, ո՞ւր է քննիչն, ո՞ւր է այն՝ որ պարծիցի յաշխարհական զգօնութիւն.

## Գլուխ Զ.

Այն ժամ Յս՟ Քս՟ յղացաւ ի Մարիամայ՝ (տնտեսութեամբ Ա՟յ Հօր, և ծնաւ ի Հոգւոյն Ս՟բյ) ի զաւակէն Դաւթի, և մկրտեցաւ առ ի մաքրել զջրոցն ապականութի.

Այլ ծածկեցաւ յիշխանէ աշխարհիս կուսութիւն Մարիամու, և ծնունդ նր՟. այլ և մահն Տեառն.

Որպէս խորհուրդս հնչման զարմանալիս գործեցան խոնարհութեամբ Ա՟յ.

Իսկ որպէս ծանուցաւ յԱ՟ի աստղն՝ որ ծագեաց յերկինս, որ առաւել էր քան զա՟մ աստեղս.

Այլ թէ՝ ո՞վ անպատմելի էր լոյս նր՟, և զի՝ օտար էր տեսիլ նորա.

Այլ զի՝ ա՟մ աստեղք հանդերձ արեգակամբ և լուսնիւ. երբև գունդ եղեն աստեղն այն. մա՟ զի՝ լոյս նր՟ առաւել էր քան զամենեսին.

Այլ եղև աղաղակ՝ եթէ ուսոյ նորոգութիւն նր՟, որ ոչ է նման այլոցն.

Այժմ յայսմանէ լուծանէր ամ՟ կախարդութ՟ի աստեղագիտացն, և պատրանք չարին սպառէր։ և հին թագաւորութեան քակէր յայտնութ՟ն Ա՟յ։ Որ մարմնացաւ առ ի կեանս նոր յաւիտենից։ որ եղև սկիզբն ամ՟ի որ ամ՟ կատարի։

Յայսմանէ զարհուրեցաւ ամ՟ ինչ ի միասին, վ՟ զի լուծումն մահու կատարէր։

Այժմ եթէ արժանի արասցէ զիս Տ՟ր իմ Յ՟ս Ք՟ս ա՟ծ կամօք իւրով ի միւսում թղթին՝ զոր գրեմ առ ձեզ ծանուցանեմ ձեզ վ՟ տնօրէնութ՟ե խորհրդոյն՝ յոր սկսայ ի նոր մարդն որ է Յ՟ս Ք՟ս։ հաւատովք և սիրով նորա, չարչարանօք և յարութեամբ նորա։

Այժմս առաւել եթէ յայտնեսցէ ինձ տ՟ր, ասացից՝ եթէ իւրաքանչիւրոք ի ձէնջ ի միասին ժողովիցիք շնորհօք և միով հաւատով Յ՟սի Ք՟սի։ որ եղև ի մարմնի ի զաւակէ դաւթի,

թի, որ է որդի մարդոյ՝ և որդի ա՟յ.
Այժմ արդ՝ ունկնդիր լերուք եղբ՟ք
և երկեցանց ուղիղ մտօք.
Այժմ հանապազ բեկանեալք զմի հաց
որ է դեղ կենաց. զի որ առնուցու
զնա արժանութեամբ՝ ոչ մեռանիցի, այլ
կեայ յա՟վ ՚ի ձեռն Յ՟սի Ք՟սի.
Ընձ՟ եմ՝ փոխանակ անձանց մերոց
եղիցի եղբարք և զոր ինչ առաքեցիք
ինձ ՚ի զմիւռոնիոյ՝ ընծայելոյ. զի անուն
գրեցի առ ձեզ.
Պառհանամ զա՟յ, և սիրեմ զՔ՟ողէ
կարապոս. յիշեցէք զիս հանապազ. ով
և զձեզ տր մեր Յ՟ս Ք՟ս.
Ողօթս արարէք վ՟ր եկեղեցւոյն ա
սորուոց, զի անուն կոչեցաւ վարիմ
՚ի Հռովմ իբրև զհաստատարիմ առա
քեալ որ է անդ եթէ գտանիցիմ ՚ի
պատիւ ա՟յ.
Ողջ լերուք յՈ՟Տ Հայր Տ՟Ն մերոյ
Յ՟սի Ք՟սի յոյսն ամենեցուն
Շնորհք ը՟ ձեզ ամէն.

Առ Մաղնիսիացիսն·

Գլուխ · Ա·

# ԻԳԱ

ՏԻՈՍ ՈՐՒ ԱԾԱԶ ԳԵԱՑ,

Եկեղեցւոյդ օրհնեալ ի շնորհացն
ա͞յ հօր՝ Մաղնիսիա որ է մերձ ի Մէ
նանդրոս գետն՝ բազում ողջոյն ի
Ք͞ս Յ͞ս ի Տէր մեր·

Աղօթեմ վ͞ս ձեր առ Ա͞ծ Հայր տ͞ն
մերոյ Յ͞սի Ք͞սի·

Յորմէհետէ գիտացի զհաստատուն

 սէրդ

սէրդ Տէր, ՚ի գնացս իմ խորհեցայ
հաւատով Յ՟սի Ք՟սի խօսիլ ը՟ Տեառ.
Քանզի արժանացեալ Ա՟ծավայե-
լուչ անուանդ կայսերքն որովք չըք
քիմ՝ օրհնեմ զեկեղեցիսն.

Յորս միութեն ըղձամ մարմնոյ և
հոգւոյն Յ՟սի Ք՟սի համապաշտպա-
նի մերոյ կենացն. հաւատոյն և սի-
րոյն, որ քան զայն միութին չէք նա-
խամեծար.

Իսկ՝ տիրագոյնն Յ՟սի Ք՟սի և Հօրն
որով համբերելով ՚ի յա՟մ փորձու-
թեց իշխանի Չ՟րի այսորիկ փախու-
ցեալք՝ առ Ա՟ծ ապաւինիմք.

Ա՛յ որդ՝ արժանացայ տեսանել զձեզ
՚ի ձեռն Դամայի՝ արժանի ա՟յ Տէր
եպիսկոպոսի.

Ա՛յ արժանաւոր քահանայից Բասոսի
և Ապողոնիոսի, և ծառայակցին ի-
մոյ պաշտօնէին Զօտիոնի.

Որոյ ես փափաքէի, զի հնազանդի
եպ՟իսն ա՟յ շնորհաց ա՟յ, և քահանայ
ից երէց օրինացն Ք՟սի.



Ա՛րդ

Սուրբ՝ և ձեզ պատշաճ է մի՛ նայել
յամս եղբօր ձերոյ, այլ ի զօրու-
թիւնն այ·

Այլ հատուցէք նմա պատիւ իբր ար-
ժանեաց, ոչ և ուսայ վն նր քահա-
նայիցդ ձերոյ·

Որ ո՛չ նայիցն յերեւելի հասակս ման
կութե նր· այլ՝ ի բերս իմաստութե-
անն հնազանդին նմա·

Այլ ո՛չ նմա միայն, այլ և հօր Տն
մերոյ Յսի Քսի, որ է եպիսկոպոս
ի վերայ ամենայնի·

Զի թէ նա հաճեցաւ ի պատիւ
նր, և ձեզ արժան է լսել նմա առանց
կեղծաւորութե·

Այլ որ արհամարհել կամի՛ ո՛չ թէ
զերեւելին եպիսկոպոս արհամարհէ՝ այլ
զաներեւոյթն·

Այլ արհամարհանք այսոցիկ ո՛չ է՛ առ
մարդ մարմնաւոր, այլ առ Այ ծած
կագէտ·

Պարտ է մեզ՝ ո՛չ միայն անուամբ
կոչիլ քրիստոնեայս, այլ և գործովք·



Այն

Այն ոմանք որ անուամբ կոչին քրիս-տոնեայ, և առանց նորա գործեն զամենայն ինչ.

Այլ որք այսպէսն խորհին, համա-րիմ թէ՝ ոչ ունին միտս բարուոք. քանզի և ոչ ՚ի հրամանս այ ժողովին.

Պարտէ իմանալ թէ ամ իրաց վախ-ճան գոյ, և մահ՝ և կեանք, որք երկոքեան եդեալ են ՚ի միասին, և ամ մարդ զպատրաստեալ տեղին իւր ընկալցի.

Զոր օրինակ՝ եթէ իցեն, բ, դահե-կան, միոյն այ, և միւսն աշխարհի, և իւրաքանչիւր ոք ՚ի նոցանէ զպատ-կեր իւր առանձին ցուցանէ.

Այսպէս և որք ոչ ունին ուղիղ հաւ-ատս, պատկեր իշխանին չարի են.

Իսկ՝ որ սուրբ հաւատացեալքն են սիրով պատկեր են հօր այ ՚ի ձեռն Յսի Քսի.

Այլ եթէ ոչ կամիմք չարչարիլ և մե-ռանիլ վա անուան նր, զկեանս նր ոչ ունիմք յանձինս.



Վասն

## Գլուխ Ը.

Եւ քա՟ զի յառաջագոյն զոր գրեցի վ՟ն եպս՟ի՝ եւ երիցանց եւ սարկաւագաց՝ ուսանի զա՟մ ժողով ձեր ըն՟ մ՟ք հաւատովք եւ սիրով. Այլ խնդրեմ ՚ի ձէնջ, զի միաբանութե՛ եւ ա՟վ գործիցէք զա՟մ կենց. եւ նստցի եպիսկոպոսն ՚ի գլուխս ձեր իբրեւ զԱ՟Յ, եւ քահանայք իբրեւ զհրեշտակս Թագաւորի, եւ սարկաւագունք ՚ի կերպարանս առաքելոց ուք յոյժ սիրեցեալքն էն իմ, որ հաւատարիմքն են սպասուցն յս՟ի ք՟ի. Որ մշտնջենաւոր էր առ Հայր. եւ ՚ի վախճան ժամանակաց երեւեցաւ մարմնով.

Արդ՝ եւ դուք ամենեքին առէք ՚ի ձեզ զնմանութի՟ն ա՟յ, եւ զմիաբանութի՟. եւ պատկառեցէք ՚ի միմեանց. եւ մի՛ նայէք ՚ի միմեանս մարմնապէս, այլ սիրով Յս՟ի Ք՟ի.

Այժմ մի գտցին առ ձեզ պատճառք



բաժան

բաժանմանն, և հաւանեցարուք եպիս-
կոպոսի. որ նստի 'ի գլուխս ձեր,
'ի տնտեսութիւն բարի և յուսումն անա-
պականութեան.

Որպէս և տէր մեր որ ոչ գործէր ինչ՝
առանց հօր՝ և ոչ անձամբ՝ այլ կա-
մօք հօր 'ի ձեռն առաքելոցն.

Նոյնպէս և դուք մի՛ գործէք ինչ ա-
ռանց եպիսկոպոսի և քահանայից, և մի՛ փորձելով
փորձէք տեսանել ինչ պատշաճաւոր
իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յանձնէ.

Այլ 'ի միասին եղիցին ձեր միաղօթք
մի պաղատանք, մի միտք, մի խոր-
հուրդ, և մի յոյս սիրով Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի. վասն զի չիք ինչ առա-
ւել քան զնա.

Ամենեքեան դուք իբրև 'ի մի տաճար
ընթացարուք. և 'ի մի խորան՝ առ մի
Տէր Յիսուս Քրիստոս. որ 'ի մի Հօրէ էր. և
առ մի եհաս.

Այլ մի՛ մոլորիք յօտար ուսմունս,
'ի հին և 'ի նոր առասպելս, որ ոչ
ինչ օգուտ են ձեզ.

Գլուխ Գ.

ԲԱՅՑ արդ՝ եւ յորժամ ծանեաք զճշմարտութիւն, եւ ըստ հրեշտակեան օրինացն վարիք՝ խոստովանելի է՝ եթէ զշնորհսն ա̃յ՝ ոչ ընկալայք.

Մարգարէքն՝ որք առաքեցան յա̃յ, ի Քս̃ Յս̃ հանդերձեան.

Նաեւ մս̃ այնուրիկ հալածեցան զի զհոգի շնորհաց զգեցեալք էին առ ի ստուգել ապստամբաց, եթէ գոյ մի Աստուած որ յայտնեցաւ ի ձեռն Յս̃ի Քս̃ի.

Որ է բան եղեալ ի լռութէ, որ ա̃մ ինչ հաճոյ եղեւ այնմ որ առաքեացն զնա. Իսկ՝ եթէ որք նախ շրջեցան ի գործս հնս եւ եկին յայս ուրախութի̃, այժմ ոչ պահեն զշաբաթս, այլ զկիրակէ որ տե̃ռ է առաւօտին, յորում ծագեաց մեզ կեանքն ի ձեռն մահուան տն̃ մերոյ Յս̃ի Քս̃ի, զոր ոմանք ուրանան.

 Իսոր

Խորհրդով ընկալայք զհաւատս, և վ̃անկ համբերեմք չարչարանաց. զի գտանիցեմք աշակերտք Յ̃ի Ք̃ի, որ նա միայն է վարդապետ մեր.

Այլ զի մի՛րդ կարծեցեմք կալ առանց նր̃, զոր և մարգարէքն թէպէտ և աշակերտք էին հոգւոյն Ս̃րբ, բայց նմա ակն ունէին իբրև վ̃րդապետի.

Այլ քանզի արդարութբ̃ ապաւինէին նմա, յորժամ եկն և յարոյց զնս̃ 'ի մեռելոց.

Արդ՝ 'ի միտ առցուք զքաղցրութի̃ւն նորա, և նմանեսցուք նմա, որպէս և նա մեզ, և ուսցուք զհոգին քրիս-տոնէական.

Իսկ՝ որ այլ անուն կոչի բաց 'ի նը-մանէ՝ նա ոչ է Ա̃յ.

Ի բաց արարէք այսուհետև 'ի ձէնջ զհին խմորն չարութեան որ քացա-խեալն է ապականութբ̃, և փոխեցա-րուք 'ի նոր զանգուած որ է Յ̃ս Ք̃ս. Այլ յարեցարուք 'ի նա, զի մի՛ նենգապականեսցի ձեզ, և դաստի-

 արա

արականեցարուք ՚ի հոգւոյ նր՟.
Ո՛չէ արժան ուր Յս՟ Քս՟ պատմի հրէաբար կեալ. զի ոչ էառ հաւատ քրիստոնէութիւն ՚ի հրէութիւնն, այլ հրէութիւն ՚ի քրիստոնէութիւն. և ամ՟ որ հաւատայ ՚ի նա՝ առ Այ՟ ժողովի.

## Գլուխ. Գ.

ԶԱյս գրեմ առ ձեզ սիրելիք իմ, ոչ թէ գիտեմ ինչ զոք ՚ի ձէնջ՝ որ այլանդս վարի. Այլ զի փոքր ՚ի շատէ յառաջագոյն զգուշացուցանեմ զձեզ, զի մի՛ անկանիցիք յորոգայթս սնափառութե՟ն. Այլ հաստատեցարուք վերստին ծննդեամբն և չարչարանօքն և յարութե՟ն. Որ եղև յամս պոնտացւոյ պիղատոսի դատաւորի, և գործեցաւ այս ճշմարտապէս ՚ի տէր մեր Յս՟ Քս՟ յոյսն մեր. որ քաւ լիցի մեզ ՚ի բաց դառնալ ՚ի նմանէ.



Ու

Ուրախ եմ 'ի ձեզ յա՟մ ինչ, միայն
Թէ արժանի իցեմ. զի Թէպէտ և
կապեալ իցեմ, սակայն իբրև զմի 'ի
ձէնջ յարձակելոց ոչ եմ.

Գիտեմ՝ զի ոչ հպարտանայք, զի
Յս՟ Քս՟ 'ի ձեզ է. և յորժամ գո
վեմ զձեզ, գիտեմ՝ զի ևս առաւել
պատկառիք. ոպ՟ և գրեալ է, Թէ
արդարն ինքնին խրատէ զանձն իւր.
Փութացարուք հաստատել յուխտս
Տն՟ և առաքելոց նր՟, զի յա՟մ գործս
ձեր պայծառասցիք հոգւով և մար
մնով.

Հաւատով և սիրով Հօր և որդւոյ
և Հոգւոյն սբ՟յ, 'ի սկիզբն և 'ի կա
տարումն, հանդերձ եպ՟սկ՟պսաւդ
ձերով. որ արժանիդ է գովեստի. և
հոգևորական պսակի. քահանայական
դասուն ձերոյ, և պաշտօնէիւք ձե
րովք, որք են ա՟վ.

Եպ՟ի և միմեանց հնազանդ լերուք,
ոպ՟ և Յս՟ Քս՟ Հօր, և որպէս առա
քեալքն Յս՟ի Քս՟ի և Հօր, զի ե

ղեցի միաբանութիւն հոգւով և մարմնով։ Գիտեմ զի լի էք շնորհօքն այ, և վսն վստահութեան խնդրեմ ՚ի ձէնջ։ Յիշեցէք զիս յաղօթս ձեր, զի արժանի լինիցիմ այ և եկեղեցւոյն Ասորւոց։

Նաև ոչ եմ արժանի անուանի անուանել, կարօտ եմ միաբանութեան սիրոյ ձերոյ և աղօթից։ Արժանի լիցի և եկեղեցին Ասորւոց, ցօղել ՚ի նմա աղօթք ձեր և հաստատութի։ Ողջոյն տան ձեզ Եփեսացիքն ՚ի Զմիւռնիայէ զի անտի գրեցի առ ձեզ, որք և կեալն են ՚ի փառս այ, ոպ և դուք։ Որք՝ ամի հանգուցին զհոգի իմ իբրև զՊօղիկարպոս եպսկպս զմիւռնացւոց։ Նաև՝ այլ եկեղեցիք պատուեալք Յսի Քսի ողջոյն տան ձեզ, ողջ լերուք միաւորութեամբ այ, և ստանայցուք առանց բաժանման հոգի որ է Յսն Քսն, ողջ լերուք եղբարք Ամէն։

## Առ Տրալլիանոսացիս.

### Գլուխ Ա.

ԻԳՆԱ
ՏԻՈՍ, ԱԾԱԶԳԵՑ,
Եկեղեցւոյդ սիրեցելոյ յԱյ Հօրէ
եւ Տն մերոյ Յսի Քսի, որ է 'ի Տր
րալլիանոս քաղաք ասիացւոց.
Ընտրեալ եւ արժանի այ. եւ խաղա-
ղեալ ճշմարիտ մարմնով եւ արեամբ
Տն մերոյ յՍի Քսի եւ յարութ. Նորին.
Որում ողջոյն տամ լրմամբ եւ նմանու


Թէ

թէ առաքելութե, և աղօթեմ զի
բազմասցի ողջոյն ձեր անբիծ և ա-
ներկեան մնաք.

Ծանեայց վն ձեր՝ թէ համբերու-
թի մեծ ստացեալ ունիք յանձինս,
ոչ ընունայնութե, այլ մտաւոր ի-
մաստութե. որպ ծանեայց ինձ Պօղ-
բոսս եպիսկոպս ձեր, որ եկին առ իս
՚ի զմիւռնիա կամօք Տն մերոյ Յսի
Քսի. Այլ այնպս ցնծացեալ ընդ
կրեցաւ ընդ իս ՚ի կապանս իմ, որ ՚ի
Քսի Յսի, որ և զամ ժողովն ձեր՝
նովաւ տեսի.

Այլ ծանուցեալ զբարութի մտոս ձեր.
որ է աստ ՚ի ձեռն նր փառաւորե-
ցի զտէրն իմ Յսի Քսի. զի այնպս
գտայք նմանողք Այ՝ որպ և ուսայք.
Զի յորժամ հնազանդիք եպիսկոպսի
իբրև Յսի Քսի, երևիք ինձ եթէ
ոչ ՚ի մարմնի կայք, այլ ՚ի տէր Յսի
Քսի որ մեռաւ վն մեր.

Այլ յորժամ հաւատայք զծնունդ
նր և զմահն, ազատեալ էք ՚ի մահ-

ռեանք.

Բարւոք է ձեզ չգործել լինել ա_
ռանց եղկելեացն, այլ և առանձնաբար լինել.
Հնազանդ լերուք և քահանայից, երբև
առաքելոց Քսի. զի գտանիցին կեանք
ձեր նոքօք.

Պատուական է և արժանագոյն հնազանդութիւն,
որ են խորհրդակիցք Այի Քսի,
և յանուն հաճոյ լինելոյն մյ և մարդկանս.
Ո ի ոչ ունի կերակրոց և ըմպել_
եաց են սպասաւորք, այլ եկեղեց_
ւոյ այ. և վն այնորիկ պարտ է նոցա
զգուշանալ ի մեղաց երբև ի հրոյ.
Իսկ դմ որք ամենայնք ի սարկաւա_
գաց երբև Յսի Քսի. և յեպիսկո_
պոսս երբև ի հօրն մյ. և ի քահա_
նայից երբև ի խորհրդակցաց այ, և
ի կարգակցաց առաքելոցն. վն զի
առանց յայսցանէ ոչ անուանի եկեղեցի.
Գիտեմ՝ զի և դուք այսպէս ունիք
և զկերպարանս սիրոյ Տեառն ընկա_
լայ, որ կատարեալ է յեպիսկոպոս ձեր
որոյ խոնարհութիւն մեծ աշակերտու_



թիւն է

թի է, և հեզութիւն զօրութի։
Համարիմ՝ եթէ և որ անմտքն են
պատկառելին ՚ինոցանէ։

Այս՝ վ̃ս զի սիրեմ զձեզ՝ խնայեմ
՚ի ձեզ գրել հզօրագոյս և փառաւո-
րել։ Այլ և՝ ոչ եմ բաւական իբրև
զառաքեալ հրամայել ձեզ, վ̃ս զի
այլ մի դատապարտեալ եմ։

Բաղձում ինչ խորհիմ յԱ̃ծոյինան,
այլ սահմանեմ զանձն իմ, զի մի պար-
ծելով կորնչեցիմ։

Այժմ պարտ է ինձ առաւել. երկնչել
և ոչ նայել յայնոսիկ որք կարծինն
ապաքինել զիս։

## Գլուխ Բ.

Սէր՝ սիրեմ չարչարիլ, բայց ոչ գիտեմ թէ արժանի ի-
ցեմ։ Նախանձ ոչ բազմաց երևի,
բայց զիս մարտ ունի, բարւոք է
խոնարհութի, վ̃ս զի նովաւ լուծա-
նի իշխան Ն̃իս այսորիկ։



Այս

Տկարօղ եմ գրել ձեզ զբարձրագոյն
սըն և զերկնայինսն. բայց երկնչիմ
գուցէ զրկումն ինչ լինիցի ձեզ.
Պախուեմ յանձնէ իմմէ և զգուշա-
նամ, ոչ վ՟ն զի կապեալ եմ.
Այլ՝ բաւական եմ գիտել զերկնա-
ւորսն, և զզաւառս հրեշտակաց՝ և
զիշխանութիւն՝ և զպետութիւս, և
զերևելիս՝ և զաներևոյթս.
Այլ վ՟ն այնորիկ եղէ աշակերտ. այլ
զի յոյժ պակասեալ եմ ի նմանու-
թէն ձ՟յ.
Արդ՝ խնդրեմ ի ձէնջ եղբարք,
ոչ եմ՝ այլ սէրն Տ՟ն մերոյ Յ՟սի
Ք՟սի՝ ի Թուղակէ քրիստոնէութե՟
միայն կերակրեսցուք, և յօտար ար-
դեանց հեռասցուք՝ որ են հերեսի
ովտայք.
Արդ՝ խառնակէն զանձինս ի բ՟նց
է Յ՟սի Ք՟սի, զի զպարզամիտսն
հաւատացուսցեն.
Ո՛ որ օրինակ այնոքիկ որ խառնեն
զդեղ մահու ը՟ մեղր. զի զորս


ոչն

ոչն ծանուցէն, ցանկութիւն զմահն
ընկալցին.

Արդ՝ զգուշ լերուք յայնպիսեացն, և այս լինիցի ձեզ՝ յորժամ ոչ հակառակիցէք և ոչ հեռանայցէք ՚ի Տեառնէ Աստուծոյ՝ և յառաջնորդաց նորա և յեպիսկոպոսաց ձերոց.

Ո՛վ է ամ որ է ՚ի ներքոյ խորանին, մաքուր է մտօք.

Այլ որ գործէ ինչ առանց եպիսկոպոսի և քահանայից՝ անսուրբ է սրտիւն.

Ոչ եթէ գիտեմ եթէ գոյ այսպիսի ինչ առ ձեզ, այլ կամիմ զգուշացուցանել զձեզ. քանզի սիրելիք իմ էք՝ և տեսանեմ զմեքենաւոր հնարս սատանայի.

## Գլուխ Գ.

Արդ՝ դուք առէք ձեզ զխոնարհութիւն, և զհեզութիւն և հանգուցէք զանձինս ձեր հաւատով և յուսով և խրախճանութեամբ արեանն Քրիստոսի.



Այլ

Այլ մի՛ ոք ՚ի ձէնջ կալցի խէթ զեղ-
բօրէն, զի մի՛ ինչ տայցէք պատճառս
հեթանոսաց.

Պաուցէ ՚ի ձեռան դիւրագրգռելոց և
անմտաց՝ բազում ժողովուրդք այ
անարգեսցին.

Աղերսուք իբրև զհամբս յամէնի զոր
խօսիցի ոք, բաց ՚ի Յսուէ Քսէ.
Որ եղև յազգէ Դաւթի, և ՚ի կու-
սէն Մարիամայ, և եկեր և արբ ճշ-
մարտապէս.

Այլ ստուգապէս չարչարեցաւ յա-
ւուրս Պոնտացւոյ Պիղատոսի.
Այլ խաչեցաւ և մեռաւ յանդիման
երկնաւորաց և երկրաւորաց.
Այլ որ ՚ի ներքոյ են քան զերկիր,
և ճշմարտապէս յարեաւ ՚ի մեռելոց՝
և որ յարոյց զնա Հայր.
Նոյնպէս և զմեզ զհաւատացեալս
՚ի նա՝ Հյր նորին օրինակի յարուսցէ,
առանց որոյ չէք ուրուք կեալ զճշ-
մարիտ կեանս.
Իսկ՝ ապա թէ որպ ոմանք անհաւատ

 քըն

քըն. եթէ կարծեօք իմն չարչարե-
ցաւ Տէր, որ ինքեանք են կարծիք.
Ապա՛ և ընդէ՞ր արդեօք ես կապ-
եալ լիցիմ, և ընդէ՞ր աղօթիցեմ գա-
զանակուր լինել.

Ապա ուրեմն ձրի մեռանիցիմ ես,
և սուտ ասիցեմ զՏեառնէ՝ քաւ լիցի.

Փախերուք եղբարք յայնպիսեաց
բուսոց չարեաց, յորմէ ծնանին ար
դիւնք մահու և որք ճաշակեն զնոսա
վաղվաղակի մեռանին.

Այնոքիկ ոչ են ՚ի տնկոյն Հօր,
քանզի եթէ էին արդեօք, թե-
րևս լինէին և երևէին
նոքա ոստք խաչին,
և պտուղ նոցա
անապական.



Գլուխ Գ.

Արդ՝ նշանաւ խաչին ՏՆ մե-
րոյ՝ դուք անդամք էք նո-
րա, և ոչ կարէք գլուխ թշնամի լինել
անդամոց.



Աճ

Վասն զի ՏՐ խոստացաւ զմիաբա-
նութիւն մեր ը՛ իւր՝ երբև զմի մար-
մին. Ողջոյն տուր մեզ 'ի զղջմունս-
այն հանդերձ եկեղեցեաւդ այ՝ որ
է առ մեզ.

Որ և յոյժ հանգուցին զքս մարմ-
նով և հոգւով.

Խնդրեմ 'ի ձէնդ և պաղատանօք իմ, որ
վն Յսի Քսի.

Իբրու՝ զի արժանիս լինել այ, կա-
ցէք միաբանութբ և աղօթիւք ընդ
միմեանս.

Պատուիրէ մեզ ամենեցունց և ա-
ղաւթել քահանայից հանգուցանել
զեղջեալս ձեր 'ի պատուէ հօր՝ և մի-
ածնի նոր ՏՆ մերոյ Յսի Քսի՝ և
Սր առաքելոցն.

Աղօթս առնեմ ձեզ սիրով՝ լուա-
րուք ինձ, զի մի՛ լիցի ձեզ 'ի վկայու-
թիւն, զոր ինչ գրեցի ձեզ, այլ և
դուք աղօթս արարէք ինձ.

Քանզի՝ կարօտ եմ սիրոյդ ձերոյ,
իբրու զի ողորմութեն այ արժանի լի-
նի

նիցիմ ընդունել զվիճակս յորս կոչե-
ցայ. և մի՛ գտանիցիմ խոտան.

Ողջոյն տայցեն ձեզ սէր զմիւռնաց-
ւոց և եփեսացւոց.

Յիշեցէք յաղօթս զեկեղեցին ասոր-
ւոց, որոյ ոչ եմ արժանի կոչել ա-
ռաքեալ.

Ողջ լերուք ի տէր Յս Քս, և հա-
ւանեցարուք եպիսկոպոսի իբրև հրա-
մանի այ. այնպէս և քահանայից՝ և սի-
րեցէք զմիմեանս ողջամիտ սիրով.

Փափագի առ ձեզ եղբարք հոգի իմ,
ոչ այժմ միայն, այլ և՝ յորժամ ար-
ժանի լինիցիմ այ.

Այժմ տակաւին ի տագնապի եմ,
բայց հաւատացեալ եմ ի հայր Տն
մերոյ Յսի Քսի.

Եթէ կատարեսցէ զխնդրուածս
իմ և զձերդ, և նովաւ գտանիցիք
անբիծք.

Շնորհք ընդ ձեզ ընդ
ամենեսեանդ Ամէն

Սա Գիրլաուէլ Գիրացիս.

Գլուխ. Ա.

# [illegible]

ՏԻՐՈՂ. ԱՉԻՒՕ.

զեաց Աղեղեցուոյդ այ հօր և Յսի
Քսի ՏԷ մերոյ.

Որք ՚ի Գիրլաուէլ Գիրս քաղաք աւե-
այցուոց որ գթութեն այ ծնմարտեալ
է միաբանութե.

Այժ՛ ցնծայ սիրով ՚ի չարչարանս և



՚ի

՚ի յարութեան քո, և քաջալերեալ է յուսով, և բարուամ ողորմութեամբ.

Որոյ ողջոյն տամ արեանցն յոյժ քո, որ է մշտնջենաւոր ուրախութիւն, և մեայ յաւիտեանս.

Աղաչեմ աղաւնեալ եթէ կայցէք ՚ի միաբանութեան եպիսկոպոսի և քահանայից և սարկաւագաց. որ ընտրեցան կամօքն Յիսուսի Քրիստոսի, որ եդ զմեզ մերակացուս անփոփոխելի հոգւովն իւրով.

Օ՜ այս եղբարս զոր ստուգեալ ծանեայ՝ որ ոչ յանձնէ՝ և ոչ ՚ի մարդկանէ, և ո՛չ ՚ի փառասիրութենէ ընկալաւ զպաշտօնութիւն՝ որ վայելէ հասարակաց մարդոյ, այլ սիրովն Աստուծոյ Հօր և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այժմ ես յոյժ զարմացեալ եմ ընդ հեզութիւն նորա, որ լռութեամբ ՚ի վեր է քան զբանաւորս.

Զուգակցեալ է և միաբանեալ է հրամանաց Աստուծոյ՝ իբրև զաղիս քնարի. Այնկ տացէ անձն իմ երանի

Ճայնոց մտաց նոր̃· քանզի գիտեմ
եթէ կատարեալ է նա.

Այլ ոչ երբէք պղտորի և բարկանայ՝
այլ կենայ ա̃մ խոնարհութեամբ ա̃մ.

Որդ՝ և դուք որդիք լուսոյ և ճշմա-
մարտութեան, փախերուք յա̃մ հերձ-
ուածոց և ՚ի չարաչար ուսմանց.

Այլ ուր և իցէ հովիւ ուղղափառ՝
զհետ նորա գնացէք իբրև զխաշինս
սրբոյ.

Քանզի բազում գայլք գոն՝ որք հը-
պարտացեալ խորհրդին չարաչարս. և
ցանկան խոտորել զընթացս փութա-
ցողացն ՚ի ճանապարհս ա̃յ.

Բայց ՚ի միաբանութիւնս ձեր՝ չիք
ինչ նոցա տեղի.

Որդ՝ հեռի լերուք ՚ի չար արմատոց
անտի զոր տէր մեր Յ̃ս Ք̃ս ոչ է
տնկեալ.

Ոչ եթէ հերձուածք գոն ՚ի ձեզ,
այլ աղաղանի.

Զանզի՝ որ ա̃յքն են՝ այնոքիկ ը̃ եպիսկի
իցեն. Այլ որք ապաշխարեն և գան



՚ի

՚ի միաբանութիւն եկեղեցւոյ, և նոքա լի-
ցին ա͞յ. և կեցցեն ՚ի ՚Ք͞ս Յ͞ս.
Մի՛ խաբէք եղբարք, զի ա͞մ որ կը-
ցորդ է բաժանողի եկեղեցւոյ՝ զարքայ-
ութիւն ա͞յ ո՛չ ժառանգէ.
Եւ՛ որ ընթանայ արտաքոյ մտօք, ոչ
միաբանի չարչարանացն ՚Քրիստոսի.

Գլուխ Դ.

Արդ՝ և դուք ջանացարուք
վայելել միով գոհութե͞ք.
քանզի մի է մարմին Տ͞ն մե-
րոյ Յ͞սի ՚Ք͞սի, և մի բաժակ դա-
հութե͞ արեան նր͞ա և մի խորան.
Որ͞պ և մի եպիսկոպոս հանդերձ քահա-
նայական դասու, և ա͞մ սպաշտօնէ իւյն
աղքակցութեամբ.
Զամենայն զոր ինչ և առնիցէք եղ-
բարք միաբանութե͞ք գործեցէք.
Յոյժ կապեալ եմ ՚ի սէր ձեր, վ͞նի
առաւել ցնծամ և զգուշացուցանեմ

զձեզ․ ուշեա՛ այլ Յս՟ Քս՟, որում
ի և կապեալս կամ․

Ոչէ երկնչիմ ես, զի տանջանքն
չև ես եմ կատարեալ․

Բայց յուսացեալ եմ թէ աղօթիւք
ձեր կատարեսցէ զիս․ իբրու զի ար-
ժանաւորեսցայց մասինս այսմիկ, և
՚ի սմա հանդեսցայց․

Այժմ դաւանիմ յաւետարանն, իբրև
՚ի մարմինն և յարիւնն Քսի․ և յա-
ռաքեալսն՝ իբրև ՚ի սպասաւորս ե-
կեղեցւոյ․

Այժմ զմարգարէսն սիրեմ, քանզի և
նոքա վս՟ Աւետարանին քարոզեցին․
Այժմ նմա սպասեալ ակն ունէին, և
՚ի նմա հաւատացին և կացին միաբա-
նութբ՟ Յսի Քսի․

Այժմ նոքա արժանի են սիրոյ, վս՟ մա-
քուր գործոցն զոր վկայեաց տր՟ մեր
Յս՟ Քս՟․ Եթէ հաւատարիմ համար-
եալ են յաւետարանին որ է յոյս
մեր․ Այժմ եթէ ոք հրէութի՟ ու-
սուցանէ ձեզ մի լուիք նմա․

 Բար

Բարւոք է լսել յառնէ թլփատե-
լոյ վ՟ս քրիստոնէութեան, և ոչ յան-
թլփատէ վ՟ս հրէութեան.

Իսկ եթէ երկոքեանն զՅ՟ս Ք՟ս
ոչ խօսին՝ նոքա ինձ իբրև զարձա-
նս քարեայս, և իբրև զգերեզմանս
մեռելոց, յորոց վ՟ս անուն մարդոյ՝
միայն է գրեալ.

Արդ՝ փախիրուք դուք 'ի չար ար-
ուեստից նց՟, և 'ի գործոց իշխանի
աշխարհիս այսմիկ.

Գուցէ ցնորեցիք 'ի խորհուրդս նր՟
և տկարանայցէք 'ի սիրոյ ձերմէ, այլ
կացէք միաբան 'ի միասին սրտով.

Գոհանամ զա՟յ իմոյ վ՟ս մաքուր մը-
տաց ձերոց.

Նաև չիք ոք 'ի ձէնջ՝ որ վկայէ 'ի
ծածուկ՝ կամ յայտնի, եթէ ծան-
րացայ ումեք սակաւուք
և կամ բազմօք.

Պօղոս Պա.

Աղօթս առնեմ վս̃ ամենե-ցունց ըորս և խոստացայ, զի մի՛ լիցի այս ինձ ՚ի վկայութիւն. Զի թէպէտ և կամեցան ոմանք խաբել զիս մարմնով, սակայն հոգի ոչ խաբի. զի յայտ է՝ և գիտէ թէ ուստի եկն, կամ յոլ երթայ, և զծածուկսն զննէ.

Կաղաղակեցի ՚ի ձայն մեծ՝ յորժամ առ ձեզն էի, և խօսեցայ ընդ ձեզ բանիւքն այ̃. Եթէ եպ̃սկի հնազանդ կացէք, և քահանայից և սարկաւագաց. Իսկ են ոմանք որք խորհեցան զինէն, եթէ զիմորդ գիտացի ես զհերձուածըս ոմանց և ասացի զայն.

Վկայ է ինձ այն՝ որ կապեալս եմ ՚ի նմա, եթէ ոչ ուսայ ՚ի մարդկանէ, այլ՝ հոգին գոչէր և ասէր, թէ մի՛ ինչ գործէք առանց եպիսկոպոսի. Զմարմինս ձեր իբրև զտաճար այ̃

պահեցէք․ և զմիաբանութիւն սիրեցէք և 'ի հերձուածոց փախերուք․ Նմանեցարուք Յսի Քսի, որպէս և նա Հօր իւրոյ․

Ե՛ս զիմս արարի ո՛պս այր կատարեալ միաբանութեամբ․

Արդ՝ ուր երկմտութիւն և բարկութիւն գոյ՝ անդ ոչ բնակէ Ած․

Բայց այնոցիկ՝ որ ապաշխարեն, թողցէ նոցա տէր, եթէ դարձցին 'ի միաբանութիւն այ և 'ի ժողովս եպիսկոպոսաց․ հաւատամ շնորհացն Յսի Քսի, թէ նա լուծանէ 'ի ձէնջ զամենայն կապանս․

Խնդրեմ 'ի ձէնջ եղբարք, մի գործէք ինչ հակառակութե՛, այլ անուամբն Յսի Քսի․

Այլ վս՛ զի լուեայ յոմանց զի ասէին, եթէ 'ի գիրս առաջինս՝ ոչ փառաբանի Աւետարանին՝ ո՛չ հաւատամք նմա․ Ե՛ս ապաքէն ասացի ձեզ՝ եթէ գրեալ է՝ թէպէտ և նոքա ասեն՝ եթէ աւելորդ է․

Սող ինձ գիր առաջին Յսս Քրստս է,
որ ո՛չ յափշտակելի, խաչն և մահն՝ և
յարութիւն և հաւատքն․ յորս յայ-
տնիկ ակն ունիմ արդարանալ աղօ-
թիւք ձեր․

Բարեւոք են քահանայք, բայց առա-
ւել քան զնոսա է քահանայապետն․ որ հա-
ւատարիմ է սրբութեան սրբոց, որ նա
ինքն միայն գիտէ զծածուկսն Այ․

Իբր նա է դուռն Հօր, և ընդ նմա
մտանեն Աբրահամ՝ Իսահակ՝ Յա-
կոբ՝ և մարգարէք՝ և առաքեալք և
եկեղեցի․

Այսոքիկ ամենքն ի մի միաբանութիւն
Այ․ Իսկ առաւելութիւն գոյ ի մէջ ա-
ւետարանին՝ գալուստ փրկչին մե-
րոյ Յսի Քսի, և չարչարանքն և յա-
րութիւն նորա․

Սիրեցեալ են և մարգարէքն, զի զնա
նոքա քարոզեցին․

Բայց աւետարանն կատարումն է ա-
նապականութեան, և ամենեքեան ի
միասին բարի են հաւատացելոց․

 Իբր

Ասէ՛ քանզի՝ ունիմք մխիթարութիւն
և ողորմութիւն զայս քո՝ որ է ՚ի ձեռք:

## Գլուխ Գ.

Մամեցաւ իմն եթէ մու-
թանութիւն գոյ յանտերը
յեկեղեցին աստուծոյ:

Սող՝ և ձեզ պատշաճէ իբրև եկե-
ղեցւոյ տն̃յ ընտրել զումն բարուք
պաշտօնեայ, որ կարող իցէ լինել
կարապետ տն̃յ:

Այդ զի երթիցէ անդր, և ՚ի միասին
ուրախասցի ՚ի ժողովս նո̃ց, որ փառա-
ւոր առնեն զանուն տն̃:

Երանելի է աստուածապէս ՚ի Քս̃ Յս̃
որ զպաշտօնս զայս կատարեսցէ, և
գտցէ փառաւորեալքը:

Քանզի և կամիք՝ և ոչ իմիք է ձեզ
դժուար իմն՝ փոխանակ անուանն տն̃յ
զայսոսիկ գործել:

Իբրև զՔս̃ եկեղեցիսն՝ որք առաջե-
ցին զեպիսկոպոսս և զքահանայս, և
զսարկաւագունս:

Վ՟ս Փիլոնի սարկաւագի կիլիկեցւոց
որ է այր վկայութեանց․ և որ այժմ
բանիւ ա՟յ պաշտէ զիս, հանդերձ
Ռէոսիւ եղբարբ և Ագաթօբուսիւ
առն ընտրելոյ, որ է յասորւոց։
Որև հրաժարեաց յա՟շխէ՝ և կցորդ-
եղև ինձ։
Սոքա վկայեն վ՟ս ձեր, և ես գոհա-
նամ զա՟յ փոխանակ ձեր, զի ընկալայ
զնոսա իբրև զձեզ ՚ի տէր։
Այլ որք անարգեցին զնոսա՝ քաւեալք
լիցին շնորհօք տ՟ն մերոյ Յ՟սի Ք՟սի․
Ողջոյն տայ ձեզ սէր եղբարց, որ
են ՚ի Տրովադա, զի անտի գրեցի
առ ձեզ, ՚ի ձեռն բուրրոսի, որ
առաքեցաւ ը՟իս ՚ի պատիւ ինձ, յե-
փեսացւոց և ՚ի զմիւռնացւոց․ զորս
պատուեսցէ Յ՟ս Ք՟ս, մարմնով և
հոգւով և մտօք, և սիրով և միաբա-
նութ՟ք․ Ողջ լերուք ՚ի Ք՟ս Յ՟ս
յոյսն մեր․ Շնորհք
ընդ ձեզ Ամէն․



Սա

Առ Հռովմ քաղաքէ

Գլուխ. Ա.



**Պ Ե Ս**

**ՏԻՈՍ ՈՐ Է ՇԻԾԼՕՑ**

գեաց Եկեղեցւոյդ համագուսցելոյն
ծնեթեամբ բարձրելոյն հօր տն մե
րոյ Յ̃ի Ք̃ի.
Որ միայն է որդի որբոյն և լուսա՝
ծորչէն. և ի կամս աշխարհի որ կամի

 ըզ

ըղձկեանս ամենայնի ։ Հաւատով և
սիրով Յսի Քսի այ մերոյ, այնմ
որ նստի ՚ի գլուխ եկեղեցւոյ Տէրդ Հռ-
ոմայեցւոց։ Որ և արժանի ես այ և
արժանի արդարութե, և երանութե,
և գովեստի, և աղօթից և սրբութե։
Այժ ցուցեալ է սիրով, և հաստատեալ է,
օրինօքն Քսի և անուամբ հօր։
Որում ողջոյն տամ մարմնով և հոգ-
ւով։ այլև՝ որք հնազանդ են հրա-
մանաց նր, և լի՛ են շնորհօքն այ։
Այժ մաքուր են յամ օտար կերպա-
րանաց ՚ի ձեռն Յսի Քսի անբիծ
սրտիւ՝ բազում ողջոյն։
Սա զի աղօթս արարեալ առ Յս ար
ժանի եղէ տեսութե ձերում, զոր
և առաւել խնդրէի ընդունել։
Այժ այժմ կապեալ ՚ի Յս Քս յու-
սամ ողջոյն տալ ձեզ։ եթէ լինիցին
կամք այ, և արժանաւորեցայց կա-
տարման։ Սկիզբն բարւոք տնօրի
նեցաւ եթէ զվախճանն ևս գտից,
և ընկալայց զմասն իմ առանց մե-



ղաց

զաւրանաց։ Այլ երկնչիմ ՚ի սիրոյդ ձերմէ, գուցէ յաղթահարեսցէ զիս. Ձեզ դիւրին է գործել՝ զինչ եւ կամիք, բայց ինձ դժուարին է արժանանալ ա՟յ. Թէ դուք ոչ խանդայցէք ոչ կամիմ եթէ մարդկան հաճոյ լինիցիք՝ այլ ա՟յ, ո՟պ եւ էքդ.

Չիք այլ ժամանակ իբրեւ զայս, որ արժանաւորեցայց ա՟յ, եւ ո՛չ դուք՝ եթէ լռէք, քան զայս առաւել գործ գտանիցէք.

Ո՛չ է եթէ լռէք յինէն բանիւ՝ ես մասն ա՟յ լինիցիմ։

Ապա թէ զմարմինս իմ սիրէք՝ դարձեալ եղէց ընթացող։

Ա՞ի տայք ինձ առաւել ինչ քան զնոյնս որ ընծայեիմ ա՟յ մինչ պատրաստ է սեղանն. Աիայն սիրով կացէք, եւ միաբան փառաւոր արարէք զհայր տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի. որ զեպիսկոպոսն ասորւոց ար ժանաւորեաց կոչել յարեւելից ՚ի յարեւմուտս։

Բարւոք է ինձ ժողովիլ յ՟շխէ աստի

 առ

առ Ա՜յ, եւ նուաճ ծագել ՚ի կեանս.
Բնաւ ը՟ ումեք ոչ էք նախանձեալ,
այլ եւ զայլս ուսուցանէք.
Անով զօրութ՟ խնդրեցէք, զի տա-
ցէ ինձ ոյժ ներքոյ եւ արտաքոյ, զի
մի՛ միայն ասացից՝ այլ եւ կամեցայց.
Այո՛ մի՛ կոչիլ եւեթ քրիստոնեայ՝ այլ
եւ լինել, զի եւ գտանիցիմ յոր եմ, եւ
կոչիլ մարթիցիմ.
Այո՛ յայնժամ լինիցիմ հաւատացեալ
յորժամ աշ՟ի ոչ երեւիմ.
Չէք ինչ երեւելի որ բարւոք է.
քանզի եւ Ա՜յ մեր Յ՟ս Ք՟ս յոր-
ժամ է առ Հօր եւս առաւել երեւի.
Ո՛չ ը՟ ունայնութեան է գործս. այլ
մեծ ինչ է քրիստոնէութիւնն յոր
ժամ ատեա զնա աշ՟.

## Գլուխ Դ.

Ես գրեմ յա՜մ եկեղ՟ցիս՝ եւ ծա-
նուցանեմ, եթէ իմով կամաւ
մեռանիմ փոխանակ Ա՜յ, միայն եթէ

դուք ոչ արգելուցուք զիս։
Խնդրեմ ՚ի ձէնջ մի՛ առնէք առիս
սէր ՚ի տարաժամու։
Թոյլ տուք ինձ լինել գազանաց կե-
րակուր և ՚ի ձեռն նց արժանաւորիլ
այ։ Ցորեանահատ եմ այ, և յատա-
մունս գազանաց աղացեալ լինիմ, և
գտանիմ հաց սբ այ։
Այլ մանաւանդ գրգռելով գրգը-
ռեցէք զգազանսն, զի լիցին ինձ գե-
րեզման, և մի ինչ թողցեն ՚ի մարմ-
նոյ իմոյ։
Ես ապա յայնժամ լինիցիմ ճշմարիտ
աշակերտ Քի՝ յորժամ զմարմինս
իմ աշխս ոչ տեսանէ։
Խնդրեցէք ՚ի տնէ վս իմ՝ զի յայ-
սմ գործոյ անօթ պատարագի այ
գտանիցիմ։
Ոչ եթէ իբրև զՊետրոս և զՊօ-
ղոսն հրաման տամ ձեզ, որք էին
ընտրեալ առաքեալք, և ես այր դա-
տապարտեալ։ Նոքա ազատք՝ և ես մին-
չև ցայժմ ծառայ։

 Բայց

Բայց եթէ չարչարեցիմ՝ ազատ Յ̃սի Ք̃սի լինիմ, և յարութեամբ ի մեռելոց ազատացեալ։

Ահա՛ ես այժմ ի կապանս եմ ուսանիմ չցանկանալ իմիք։

Սալե յասորւոց մինչև ի Հռոմ ի մէջ գազանաց եմ արկեալ, ի ծովու և ի ցամաքի, ի տուէ և ի գիշերի։

Ահա՛ կապեալ եմ ի մէջ տասն ընծուց որ են գունդ զինուորաց։

Ահա՛ որչափ բարերարեմ առ սոսա, եւ առաւել չարանան առ իս։

Բայց և այսու առաւել աշակերտիմ, և ոչ եթէ այսու արդարացեալ եմ։

Սալ ցնծամ ի գազանսն որ պատրաստեալ են ինձ, զոր և աղօթս առնեմ, զի վաղվաղակի գտցեն ինձ, և կերիցեն զիս։

Ահա՛ մի՛ լիցին ն̃ց երկնչիլ յինէն, իբրև յոմանց՝ որ ոչ մերձեցան ի նոսա։

Զի թէպէտ և նոքա ոչ կամիցին մերձենալ յիս ես հարկաւորեալ՝ գնացից ի վ̃ր նոցա։

Գիտեմ եթէ զինչ հրամայեալսն է
ինձ՝ այժմ հաւատամ լինել աշա-
կերտ։ Ոչ նախանձ եւ ինչ յիս յե-
րեւելեաց կամ յաներեւութից, այլ
զի արժանի եղէց Յ՟սի Ք՟սի։
Հուր եւ խաչ, եւ գազանք, որ պատ-
րաստեալ են, բաժանումն եւ ցրումն
ոսկերաց, եւ հատումն անդամոց, եւ
աղացումն ա՟մ մարմնոյ. եւ չար խռո-
վութ՟ք սատանայի՝ եկեսցեն ի վ՟ր իմ
միայն Յ՟սի Ք՟սի արժանաւորե-
ցայց։ Ոչ ինչ օգնեսցեն ինձ գանձ
՟Ծի, եւ ոչ թագաւորութի սորա։
Բարիոք է ինձ մեռանիլ ի Յ՟ս Ք՟ս,
քան թէ տիրել ի վ՟ր ա՟մ ծագաց
երկրի։ Զ որ խաչեցաւն վ՟ս իմ,
խնդրեմ. զոր յարեաւն ի մեռելոց
կամիմ. երկունք մինչու
յանեն ի վ՟ր իմ։

 Պողոսի

## Գլուխ Գ.

Աններուք զիս յանձնէ իմմէ եղբարք, մի մերժէք զիս 'ի կենաց: Մի կամիցիք զմահ իմ. զոր ոչ կամիմ մեռանել յԱյ. մի' պատրէք այդպէս. և մի' նախանձաւոր առնէք ը‿նկերեացս. Թողէք տուք ինձ ընդու‿նել զանապատ լոյսն:

Ի վեր յորժամ երթայց' մարդ լինիմ կատարեալ. անսացէք ինձ լինել նմանող չարչարանաց Այ իմոյ:

Իսկ որ նայեսցի' 'ի միտ առցէ զոր ինչ ես կամիմ. և չարչարեսցի ընդ իս: Զայս առնեմ զի գիտեմ թէ' զինչ է որ պաշարեալն է զիս:

Իշխան աշխարհիս յափշտակել կամի զիս, և զխորհուրդս մտաց իմոց ապականել: Մի ոք 'ի ձէնջ օգնեսցէ նմա, այլ մանաւանդ յիմ կողմն լերուք, յԱյ, Այ: Մի լիցի ձեզ խօսել և եթ վասն Յիսուսի Քրիստոսի; և աշխարհի մի' ցանկայցէք:

Նախանձ առ ձեզ մի՛ բնակեսցէ. այլ
և ոչ ինչ եթէ յորժամ գայցեմ առ
ձեզ, և խնդրիցեմ 'ի ձէնջ՝ անսայ-
ցէք ինձ. Նոցա՝ որոց գրեցից առ
ձեզ հաւատայցէք:

Զայս կենդանութ̃ գրեմ առ ձեզ,
բայց մեռանել սիրեմ:

Սէրն իմ խաչեալ է, իմ տռփումն խա-
չեցաւ, և չիք առ իս այլ ջերմութի̃
սիրոյ: Ջուր բարի և կենդանի գոյ
յիս, և 'ի ծածուկ ասէ ցիս թէ եկ
առ հայր: Ո՛չ ցանկայ ծերութե̃ն կա-
թին. և ո՛չ ցանկութե̃ց ծ̃իս այսմիկ:
Զհացն ա̃յ խնդրեմ՝ որ է մարմին
յ̃ի ք̃ի, եղելոյն 'ի զաւակէ դաւ-
թի, և զըմպելի արեան նո̃ր հայցեմ,
որ է սէր անեղծ և անապական:

Ո՛չ ևս կամիմ ըստ մարդկան կեալ, և
այդ եղիցի ինձ՝ եթէ դուք կամիցիք:
Զոր 'ի ձեռն սակաւ նշանագրացս
խնդրեմ 'ի ձէնջ՝ հաւատացէք ինձ:
Յ̃ս Ք̃ս նոյն ինքն յայտնեսցէ ձեզ,
եթէ ճշմարտապէս ասեմ անսուտ

բերանն յոր խօսեցաւ Հայր Ամենա-
բիտ։ Հայցեցէք վ̃ իմ զի արժանի
եղէց հոգէով սիրի։

Ո՛հ ՚ի մարմնի գրեցի ձեզ, այլ հոգ-
ւով և կամօքն ա̃յ։

Թէ չ̃չրեցայց՝ դուք կամեցարուք,
և եթէ խոտորեցիմ՝ յայտ է եթէ
դուք ատեցէք զիս։

Յիշեցէք յաղօթս ձեր զեկեղեցին
ասորւոց, որ փոխանակ իմ ա̃վ հով-
ուէ, և միայն Յ̃ս Ք̃ս այց առասցէ
նմա և սէրդ ձեր։

Այլ ես ամաչեմ կոչել զիս մի ոք ՚ի
նոցանէ, զի չեմ արժանի, քանզի
վերջին եմ առաքելոց նց̃։

Բայց յուսամ ողորմութ̃ն գտանել,
եթէ արժանաւորեցայց ա̃յ։

Ողջոյն տայ ձեզ հոգի իմ, և եկե-
ղեցիք ա̃յ, որք ընկալան զիս իբրև
զպատուակեր յ̃ի ք̃ի, և ո՛չ որպէս ըզ-
ճանապարհորդ։

Նա՛և որք ոչ էին մերձ յանցս ճա-
նապարհի, ը̃ս քաղաքի քաղաքի յա-

ուաջնեալ ընդունելին զիս։

Գրեցի ձեզ զայս ՚ի Զմիւռնիայ ՚ի
ձեռն երանելեաց եփեսացւոց։

Ան ընդ իս եւ այլ բազում եղբարք
սիրեցեալք եւ ոյք էին ընդ առաջ
իմ յասորւոց ՚ի հռոմ ՚ի փառս այ։

Ան դուք լեռ արժանեաց հանգու
ցէք զնամ մորդ։

Գրեցի ձեզ զայս յառաջքան զինն
կաղանդից սեպտեմբերի. յամենայն
՚իամէ որ օր ԻԷ էր։

Ողջ լերուք եւ հաստատուն կա
ցէք համբերութեամբ Յսի
Քսի. Շնորհք տն մերոյ
ընդ ձեզ ամենեսին
Ամէն։

Ի Ս. Անտիոք քաղաք.

Գլուխ Ա.

# ԻԳՆԱ

## ՏԻՈՍ ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ

Եկեղեցւոյդ ընտրելոյ ՚ի յ… … մերմէ. եւ ընկալեալ զողորմութիւն յայն Հօրէ որ նստաւ յաթոռիս. Որ եւ յառաջագոյն անուանեցաւ քահանայ Անտիոքիայ Ա. հայր եւ ՚ի տէր մեր յս քս ուրախ լինել. Յոյժ թեթեւացոյց լինել որ զկապա

Օ.



Նորա

Նմա ևս յորժամ ասաց զհանդարտու-
թիւն ձեր. և զմխիթարութիւն մարմ-
նոյ և հոգւոյ.

Աղէ արդ աղաչեմ զձեզ. ես որ կապ-
եալս եմ ի տէր. միաբան ընթացա-
րուք ի կոչումն յոր կոչեցայք.

Այլ ոչ պահեալ լինիք յանօրինաց և
ի չար հերձուածողացս. որ են պատ-
րանք և կորուստ հաւատացելոցն.

Աղէ հաստատեցէք ողջմտութեան և մարդա-
սիրութեան, և զբան հրեշտակաց և հեթանո-
սական խաբէութիւն ի բաց մերժեցէք.

Աղէ մի՛ զբօսնուլ մտաց ի նեղքս
ածէք. և մի ի պատուհասս մտաց մերոց.
զի քո լինիցի տարածումն.

Ով ի թէպէտ և հաւատարիմ ծա-
ռայն մեր ասաց թէ տէր Յիսուս քո տէր
մի է. բայց և նոյն ինքն որ զմիայն մի-
այն բազմեցեալ և զտէր մեր Յիսուս Քրիստոս
հաւատաց առաքեալ. Այլ թէ ցուցեալ
տէր յաւուր ի ձեռն ի վերայ Մովսէսի և
Կաղանդրայ հրաշից և ծնունդք.

Աղէ զօրաձեալ եթէ ասաց Աստուած —

րասցուք մարդ ըստ պատկերի մերում
նմանութե ասաց Ած զմարդն ՚ի պատ-
կեր իւր Յսն Քն մարմնանալոյն ասաց.
եթէ մարգարէն կացուցէ ձեզ ըստ
Ած ձեր յերկնաւորց ձերոց իբրեւ զիս.
Յսէ այլ մերձքիւ ասէ, ես եմ Ած ա-
ռաջին եւ ես եմ յետին. եւ չիք այլ
Ած բաց յինէն.

Որդի մին հօր միայն ասաց. այլ նոյն եւ
մի տն մերոյ Յսի Քսի ասէ.
Որդի տուաւ մեզ, որոյ իշխանութին
իւր ՚ի վերայ ուսոց իւրոց. եւ կոչի
անուն նորա հրեշտակ մեծի խորհրդո-
ցն սքանչելի խորհրդական. Ած հզ-
օր. իշխան խաղաղութեան.
Յսէ Քն մարդեղութեն նորա ասէ, ա-
հա կոյսն յղասցի եւ ծնցի որդի եւ
կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ.
Յսէ Քն չարչարանաց նորա ասէ, իբրեւ
զոչխար ՚ի սպանդ վարեցաւ եւ իբրեւ
զգառն առաջի կտրչի. եւ որ ՚ի կար-
գին. Մովսէս եւ Յերեմիայն ինքն
զԱծ հայր միայն քարոզեին. սակայն


եւ

և զոր վս՟ տն՟ մերոյ Յս՟ի Քս՟ի, ոչ
թողին՝ այլ գրեցին.

Թէ ՚ի սկզբանն էր բանն՝ և բանն էր
առ Այ՟. և Այ՟ էր բանն. նա էր
՚ի սկզբանէ առ Այ՟. ամ՟ ինչ նովաւ
եղև. առանց նր՟ա եղև՝ և ոչ ինչ. որ
ինչ եղեն.

Այլ՝ վս՟ մարմնանալոյ նր՟ա ասէ թէ՝
բանն մարմին եղև և բնակեաց ՚ի մեզ.
Այլ եթէ գիրք ծննդեան Յս՟ի Քս՟ի
որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահա
մու. Այլ առաքեալքն յորժամ ասա
ցեն եթէ մի Այ՟. ասացին ևս և
թէ մի միջնորդն Այ՟ և մարդկան.
Այլ զմարդկութիւն և զչարչարանս
նր՟ա ոչ ամաչեցին պատմել.

Ոպ՟ յորժամ ասեն. որդի մարդոյ
Յս՟ Քս՟. որ ետ զանձն իւր փոխա
նակ մր՟. Իսկ որք մի Այ՟ քարոզեն
սակս բառնալոյ զԱյ՟ութիւն Քս՟ի, նա
քա ճշմարիտ որդիք են սատանայի.
և թշնամիք ամ՟ արդարութեան.

Այլ որ ոչ հաւատայ թէ Քս՟ որդի է
այ՟ն

այնմ որ արար զերկինս և զերկիր. մշտնջենաւորին որ յառաջ է քան ըզ յաւիտեանս. զոր քարոզեցին օրէնքըն և մարգարէքն.

Եւ կամ ինչ մի այլ իմանալի զա՜ծ ասիցէ. գործի է նա բանսարկուին. Եւ որ ի մարդեղութեն հրաժարէ. և ի խաչելութեն ամաչէ. վա՜յ ես կապեալս եմ. նա է կատարելապէս նեռնն. Եւ որ սուտ մարդ ասիցէ զքրիստոս, անիծեալ է ընդ բանիւ մարգարէին. զի ոչ է յուսացեալ յա՜ծ՝ այլ ի մարդ.

Գլուխ Լ.

Այս գրեմ առ ձեզ ով նոր մանկունք քրիստոսի. Ոչ թէ զի տեսի զձեզ յայդպիսի խորհուրդս. այլ կանխեմ ամրացուցանել զձեզ ո՜մ հայր զորդիս. Որդ՝ տեսէք դուք իմաստունքդ ըզ մշակսն չարեաց. և զթշնամին խաչին

 քրիստոսի.

քմի, որոց վախճանն կորուստ է. ո-
րոց Ա՟Ծ որովայնն է. և փառք ամօ-
թըն. Տեսէք զկատաղեալ շունսն և
զթեւաւոր օձսն և զթունաւոր իժսն
և զկարիճսն։

Ամենայնիւ նոքա են աղուէսք մանունք
ապականիչք այգեաց և ոչ ինչ բերեն
յինքեանս կերպարան մարդոյ.

Դուք Պօղոսի և Պետրոսի էք ա-
շակերտք, մի՛ կորուսանէք զուխտն
ձեր։

Յիշեցէք զեւոդիոս զարժանի երա-
նութեն հովիւն ձեր. որ յառաջինն
կալաւ յառաքելոցն զվերակացութիւ
ձեր. և մի՛ անմտեցուցանէք զհայր
ձեր. Այլ եղիջիք որդիք սիրելիք
և անբիծք.

Գիտէք թէ որպ՟ վարեցայ առ ձեզ
և զորս յորժամ մերձ էի ասացի.
զնոյն և հեռաստանէ գրեմ.

Ով է որ ոչ սիրէ զՏ՟ր մեր Յ՟ս Ք՟ս
նզովեալ լիցի.

Այդ նմանօղ լերուք ինձ. զի և ես



մի-

փոխանակ անձանց ձերոց լինիցիմ.
յորժամ զ այն քո ընդունիցիմ.
Յիշեցէք զկապանս իմ քահանայք.
և արածեցէք զհօտս ձեր. մինչև
յայտնեսցէ Տ՟ր զոր հանդերձեալն
է առաջնորդել ձեզ.
Ահաւասիկ ես պատարագիմ. զի զքո
շահեցայց. Այլ և սարկաւագունք
՚ի միտ առցեն թէ զորպիսի աստի-
ճան ունին. և զգուշասցին զի առանց
մեղադրանաց լինիցին և եղիցին նմա
նոցա քնի. Ժողովուրդք հնազանդ-
լիցին քահանայից և սարկաւագաց.
Ուսանողք գիտասցեն թէ որում են
խոստացեալ զինքեանս.
Կուսք սիրեսցեն զծակիցս իւրեանց
և յիշեսցեն եթէ մին միոյ և ոչ բա
զմաց միոյ առնն. ՚ի սկզբանէն լի
նելութեան. Կանայք պատուեսցեն
զարս իւրեանց որպէս Սառրայ ըզ-
Աբրահամ. և մի՛ համարձակեսցեն
կոչել զնոսա յանուանէ. այլ պատկա-
ռեսցին. Այլ այնոքիւք անուամբ


միայն

միայն կոչեսցին որք. և կամայք ող-
միաբանութեամբ են խաղաղութեան Տեառն.

Գլուխ Գ.

Հարք խրատեցէք զորդիս ձեր
քաղաքավարական խրատու.
Որդիք պատուեցէք զհարս ձեր. զի
ձեզ բարի եղիցի.
Տեարք մի՛ հպարտութեամբ վարիք ընդ
ծառայս ձեր.
Այլ նմանօղ լերուք համբերողին
Յոբայ՝ որ ասէ թէ՝ ես ծածկեցի զդա-
տաստանս ծառայի՛ և աղախնոյ ի
մեւմ յորժամ դատէին առաջի իմ.
Զինչ արասցից եթէ զհանդէս իմ
առնէս առնէ Տէր և զխափանման նորա
դուք գիտէք.
Ծառայք մի՛ բարկացուցանէք զտեա-
րս ձեր. յաղագս չնչին իրաց. զի մի՛
լինիցիք պատճառք չարեաց.
Նոյնպէս և ամենեքին զգոյշ լե-
րուք զի մի՛ խոտորիցէք.

Պոռնկութիւն. և գարշութիւն. և ար_
բեցութիւն. կամպարտաւանութիւն. և
նախանձ. և բանսարկութիւն. և կռա_
պաշտութիւն. և հայհոյութիւն բնաւ մի
անուանեսցի առ ձեզ.

Սարքեք մի՛ ծուխասցին ՚ի վերայ նոցա մի
կոխան արասցեն զբանն.

Այսպէս հնազանդ կացէք յէրս որ
ոչ է գայթակղութիւն հոգւոց.

Իշխանաց մի՛ ընդդիմանայք. զի մի
տայցէք պատճառս որոց զպատճառան
կամիցին խնդրել ՚ի վերայ ձեր.

Եւ մի՛ կախարդութեան և տրուածաբե_
տութեան և սպանութեան անելոյ
համարիմ գրել ձեզ.

Զի այսպիսիք և հեթանոսաց անգամ
զարշելի են թող թէ քրիստոնէից.

Եւ՛ զայս մին ոչ թէ միայն զաւա_
քեալսն հրամայեմ ձեզ. այլ միայն
զի որ ՚ի ձենջ զգուշացուցանեմ զձեզ
բարբառ. Որդեակս տամ սրբոյ քահա_
նայական դասու. երեցանց և սար_
կաւագաց. և կիսասարկաւագաց. և

դպրաց և ընթերցողաց. և դռնապա-
նաց. և աշխատաւորաց. և կրօնաւորաց.
Ողջոյն տամ ի Քս տալէթայ սարկա-
ւագաց որք պահեն զդրունս սրբու-
թեանցն Այ.
Ողջոյն տամ Քրիստոնեայ կուսանաց
որ խրախացեալ են ի տր Յսի.
Ողջոյն տամ ամօթխած այրեաց.
Ողջոյն տամ համօրէն ժողովրդեան
տն ի փոքրկանց մինչ ցմեծամեծս.
Ողջոյն տամ կասիանէի և լծակցի նր.
և սիրեցեալ որդւոց նորա ի Քս.
Ողջոյն տայ ձեզ լուսաւորեալն եպիս-
կոպոսն Պօղիկարպոս որ բազում հո-
գաբարձութիւն ունի վն ձեր. Ո-
րում և յանձն արարի զձեզ Տէ-
րամբ. Ողջոյն տայ ձեզ ամ եկեղեցին
զմիւռնացւոց. որ և աղօթս առնէ
վն ձեր ի տր.
Ողջոյն տայ ձեզ և ոնեսիմոս հովիւն
եփեսացւոց. Ողջոյն տայ ձեզ Դա-
մաս մագնիսացւոց եպիսկոպոսն.
Ողջոյն տայ ձեզ Պողբիոս հեղին

տրալանացէ՛ոց։ Ողջոյն տան ձեզ
փիլոն և ախմթուփաս կէորդ իմ և
պաշտօնեայք։

Ողջոյն տաջիք միմեանց ի համբոյր
սրբութեն։ Ո յստաւիկ ի փիլիպպոսէ
գրեցի առ ձեզ եղբարք։

Ողջ լերուք դուք ամենեքին ի տր̄։
որ միայնէ ոչ ծնեալն և ծնեալն յա
ւաղ քան զա̄մ յաւէիտենս։

Պահեսցէ զձեզ հոգէ՛ով և մարմնով։
և տեսանել տացէ ինձ զձեզ յարքայ
ութեանն երկնից։

Ողջոյն տուք այնմ որ փոխանակ իմ
հանդերձեալ է լինել առաջնորդ ձեզ։
Ողջ լերուք լցեալ շնորհօքն ա̄յ հօր։
և Յ̄սի Ք̄սի որդէ՛ոյ նորա և հոգ
է՛ոյն սրբոյ, որ է օրհնեալ
յաւէիտեանս Ամէն։



Թուղթ Մարիամ կնոջ սրոյ ի կաս
պալոն քաղաքէ. առ Իգնա
տիոս երանելի գրեալ։

# ՄԱՐԻԱ
## ՊՐՈՍԵԼԻՏՈՍ

Յ̃սի Ք̃սի. առ ա̃ծազգեացդ Իգ-
նատիոս. Երանապետ Եպիսկոպոս
առաքելական եկեղեցւոյն Անտիոքայ
ասորւոց. Ինձ հայր եւ որդի իմ
սիրելի, ուրախ եղջ լինել յամ
ժամ. Ա̃ծ զի ծանեաք մեզ ով զար


մա

մանաւանդ՝ եթէ Տն Յն որդին այ
կենդանւոյ. և ՚ի վերջին ժամանակս
մարմնացաւ ՚ի կուսէն Մարիամայ, ՚ի
զաւակէ Դաւթի և աբրահամու, յոր
նախագուշակ պատգամաց խօսից, որ
կանխաւ ասացաւ ՚ի դասուց մարգա
րէիցն. Սոյն՝ աղաչեմ զքեզ Հայր
մեր՝ առաքեա՛ մեզ յիմաստութենէ
քումմէ զՍաւրինոս սէրերի՝ քոյ մա
տամբն լեալ եղելոյս, որք մերձ ՚ի
տեսութիւն և զեղեցկութիւն քահանայ կաս
պալատին. Որպէս զի մի լինիցիմք ու
նայնիք ՚ի սպասաւորաց ածայնին բանին.
Այլ և Մովսէս ՚ի միում տեղւոջ ա
սէ, եթէ ո՛չ արասցէ տր Ած զամե
նայն առաջնորդել ժողովրդեանս այսմիկ,
և մի՛ լիցի ժողովուրդ տն իբրև զոչ
խաշն առանց հովուի.
Եւ մք զի մանկունք եմք՝ որք գրե
ցան, յայդմանէ մի՛ երկնչիր ոչ ե
րանելի. Այլ համբիւ, զի դիտասցես
Թէ ՚ի վերայ քանի զմարմին խորհին,
և ինքեանք մտերեանս զոգւոյդ մանկ

 կու

կութեամբն՝ յայտնեն զծերութիւն
քահանայութեան։

Մաղ դու ՚ի միտ առ խորհրդով հոգ-
ւոյն ամէյ զոր տուեալ քեզ յայս ՚ի
ձեռն Տէրն Պետրի։

Մի ապաքէն գիտես դու զի Ամմու-
էլ մինչդեռ մանուկներ՝ տեսանող
կոչեցաւ, և ՚ի դասս մարգարէիցն
համարեցաւ։ Այս զծերութեան ըղձ
հեղի՝ վասն օրհնազանդութեան յանդի-
մանեաց, քանզի նա զորդիսն իւր՝
յորժամ խափանէին զքահանայութիւն,
և հպարտանային ՚ի վերայ ժողովրդեանն
ոչ խրատեաց։

Այս իմաստութիւն Դանիէլ մինչ մա-
նուկն էր դատեաց զգրպարտող ծեր
սըն, և յայտնեաց զնոսա լիրբս՝ և վա-
վաղուցս մտօք և ոչ ծերս։ որ թէպէտ
և յաւուրս երկրայեցելոցն էին, սա-
կայն զգործս այլազգեաց գործէին։
Նաև Երեմիա՝ յորժամ վասն ման-
կութեանն երկնչէր դալ ՚ի մարգարէ-
ութիւնն լուեալ յայս՝ զի ասեր ցնա


Մի

մէ, պահէր՝ եթէ մանուկ իմ ես, զի առ ամենեսին առ որս առաքեմ զքեզ երթիցես, և զամ զոր ինչ պատուիրեմ քեզ՝ խօսեսցիս, զի ես ընդ քեզ եմ։

Լսէ իմաստութեանն սողոմոնի՝ ոչ ապաքէն երկոտասան ամեայ էր՝ յորժամ գիտաց զանգէտ և զմեծ դատաստան կանանցն՝ վասն տղայոցն։

Մինչ զի և ամ ժողովուրդն սարսեալ զարմացան յիմաստութի մանկ-կանն, և ոչ հայեցան ի նա իբրև ի մանուկ, այլ իբրև յայր կատարեալ։

Նոյն և՝ զառակահարցուածսն դշխոյին հարաւոյ, որ իբրև զհասանս գետոց բղխէր՝ վաղվաղակի լուծանէր զնս, որով և զայնպիսի իմաստութեն զարմացոյց, և ի միոյ իւրոց՝ արտաքս եհան։

Նոյն և՝ Նախանձաւէրն Յովսիայ գրէթէ ի տարաբոյս և յանպատշաճ հասակի յանդիմանէր, զորս զգեցեալ էին զհօրն չարութեան։

Որք էին ստաբանք և պատրիչք ժո-

ղովրդեանն և յայտնի առնէր զխա_
բէութիւն դիւացն, և զորս ոչ էին
Ա՛նք խայտառակէր։
Նա՛ զպաշտօնեայս նոցա չարաչար սա
տակէր, և զմեհեանս նց կործանէր,
և զսեղանս նց սրծէր մեռելոտիւքն
և զտաճարս նոցա քակէր, և զան_
տառան հատանէր. և զարձանսն ման
րէր։ Նա՛ զգերեզմանս ամբարշտացն
շրջէր բրելով, ով՝ զի և ոչ նշան ի
մէ չարացն գտանիցի։
Այսպէս և ամմ ոք որ նախանձաւոր
լաւ բարեաց լինիցի։
Նաև՝ Պաւղոս մարգարէն և առ_
քեան և արժանան մարգարէութե բա_
նիւն և փրկչին մերոյ, մանաւանդ օծա_
նէր ի Յամաւելք ի թագաւոր։
Որպէս և ինքն ասէ ի սեղանոյ ու_
րեմն, թէ փոքր էի ես յեղբարս իմ
և մանուկ ի տան հօր իմոյ և այլն։
Նա՛ փոքր է ինձ ժամանակս քննե_
լոյ զամ զայնուսիկ՝ որ մանկութե հա
ճոյ եղեն այ, և տուեալ նց մարգա_

 րէ

բնութեան և քաղաքայութեան և

Թագաւորութեան։

Մէ՜ մեծապատիւ այս բարեկամս ընկեր՝

որ գրեցանս այժմ։

Բայց՝ աղաչեմ զքեզ՝ մի՛ ինչ տա-
ռել համարել զիս, կամ թէ՝ սնա-
փառութեանց եղէ վասն բանս իբ-

րև զուսուցիչ։

Նաև սիրով համարձակեցայ յիշեցու-

ցանել քո՛ր իմոյ տէր։

Գիտեմ ես զչափ հասակի իմում,
և զի՞ տ̃ այնորիկ ո՛չ երկայնեմ զբանս

իմ առ քեզ։

Ողջոյն տամ քաղաքայից՝ և պաշտօ-
նէից ձերոց, հանդերձ քահանայ ժո-
ղովրդեանց, որ է՛ հովանեաւ քա-

ջութեանդ ձերում արժանի։

Ողջոյն տամ ձեզ տ̃ր հաւատացեալքս

մեր, եղբարց զի ողջամբ ընկերաց

մեզ աղօթեա տէր

ամէն երանելի։

Պատասխանի թղթոյն Մարիայ․ եւ քանձերոյն Իգնատիոսի գրեալ․

Գլուխ․ Ը․

ԵՊՏԱ

ՏԻՐՈ ՍՐԼ ԼՃԼՕ ԳԼՃՅ

Կոթացելոյ ՚ի շնորհացն այ հօր բարձ-րելոյ՝ եւ որդւոյ նր տն մերոյ Յսի Քսի․ Հաւատաւորելոյ զաւակր մերոյ արժանւոյ այ, որ զ Քն ընկալեալ է,

Մեծապէս ուրախ լինել 'ի տէր.

Տեսութիւն աւելի է քան զգիր որ չափ մերձաւոր է գնդակի զգայարանացն. և ո՛չ հաղորդի միայն՝ այլ ըղնոյն սիրեցելոյն պատուէ զաւուրն. Այս դարձեալ 'ի նոյն անունն զփափաքումն առաւել ստանայ.

Բայց և զգիրդ երկրորդ նաւահանգիստ ասեմք, զոր իբրև զհարթ գաղափ ընկալեալ 'ի հաւատոյ քոում, և իբրև 'ի մօտոյ տեսաք զհարթս հոգւոյ քոյ. Որդ հոգիք բարեաց ո՛չ իմաստուհի կէին նմանեալ են աղբերաց բղխման, որ զանցեալսն 'ի վերնքեանց թեպէտ և չիցեն ծարաւէք, սակայն՝ առաւել պայծառութեամբն յիւրքեանս հզեն առ 'ի ըմպել. Այսպէս և իմաստութի քո գործէ, և հաղորդել բաղձայ յՈՒՆ ային բղխմանցն, որք բուսանին 'ի հոգւոյ քումմէ.

Ո.րդ ես՝ ով երանուհի ո՛չ եմ իմ և յիս, զի յորժամ առ իս իցեմ՝ ամ

## Թէ այլոց իցեմ։

Քանզի բազում կամօք հակառակոր-
դաց հալածիմ, ոմանք փախստեիւք,
ոմանք պահապանօք, և ոմանք երբեմն
կապանօք։ Բայց ՚ի միոջէ յայսցանէ
ոչ դառնամ, այլ՝ անօրէնութեն նոցա՝
աշակերտիմ, մանաւանդ՝ զի զ՚Քս
շահեցայց։ Նաև խրախճնամ ՚ի չար-
չարանսն՝ որ ինձ պատրաստեալ են
զի ոչ են արժանի չարչարանք ժամա-
նակիս այսմիկ՝ հանդերձեալ փառացն
որ յայտնելոցն են։

Այլ զոր ՚ի քէն թղթով հրամայե-
ցաւ՝ ուրախութբ կատարեցի, և ոչ
մի իմիք երկմտեցի։

Իսկ որ զբարի վարս նոցա քննեցեր՝
ծանեա ես. և զի դատաստանաւ-
այ զվկայութի արանցս այսոցիկ արա-
րեր, և ոչ մարմնաւոր ճարտասանութբ։
Զոյժ ուրախացուցին զիս՝ գրագարդ-
յիշատակս քո, զոր յորժամ ընթեր-
ցայ, և ոչ մտօք երկբայեցայ առ գոր-
ծըս այս։ Նաև՝ իմանալի աչօք տեսի

զոր 'ի քէնդ աղաչեցաւ առանց հա-
կառակութեան. Նման իմ եղիցի միա-
խոնարհ անձին քո, զի սիրեցեր զՏ̃ր
Տ̃ն որդի ա̃յ կենդանւոյ, վասնորոյ
և նա ինքն յայտնեաց քեզ.

Նայ և ես զանձնաւին այդ սիրեն զնա
սիրեմ. և որք խնդրեն զնա՝ գտցեն
զխաղաղութիւն.

Գլուխ. Ի.

Ոյ ինձ առեջ՝ եթէ հրճուեի
է բանին՝ զոր լուայ վ̃ա քո,
մինչ տակաւին էիր 'ի հռոմ
առ ենայգեւորն.

Զոր երկրորդեաց այժմ կղեմէս՝
արժանին երանութե՛, որ Պօղոսի և
Պետրոսի լսօղն էր.

Նո՛ այժմ յաւելեր 'ի վ̃ր այնմ հա-
րիւրապատիկ, և այլ ևս՝ յաւելցես.

Նո՛ այժմ յօժար եմ գալ և հանգ-
չել առ ձեզ, այլ ոչ է մարդ 'ի ձեռնա-
պարհ իւր.

Քանզի խափանէ զկամս իմ, եւ ոչ
թողու ՚ի կատարումն զինուորական
պահպանութիւն։

Նաեւ ոչ գործել ինչ, եւ ոչ խորհել
կարող եմ յոր ինչ եւ իցեմ։

Մինչեւ յորժամ ընկալայ զգիրս քո,
կրկին մխիթարութի համարելով Ող-
ջոյն ասեմ քահանայական հոգւոյդ,
եւ աղաչեմ առաւելուլ ՚ի մէջ քաջու-
թեանդ։

Քանզի փոքր է այս վտանգ՝ որ
կայ առաջի, եւ այն ունելի վարձքն
բազում։ Փախիր յայնցանէ՝ որ ու-
րանան զչարչարանսն Տեառն, եւ զծը-
նունդն մարմնով։

Բազումք են այժմ որ այսպիսիս հե-
ձանութիւս են ուկարացեալք։

Ուսեալ եմ եթէ կատարեալ ես յամ
գործս բարիս, եւ ՚ի բանս իմաստութե
մինչ զի կարող ես՝ եւ զայլս իմաստ-
նացուցանել ՚ի Քս։

Ողջոյն տամ ՚ի Քս ամենեցուն՝ որ
ը քում անուանդ եւ նմանութեանդ

 հաւ-

հաստատուն կան ի փրկութիւն իւր-
եանց ի Ք՜Ս։

Ողջոյն տան քեզ քահանայք և պաշ-
տօնեայք, և մանաւանդ Աւրիոն սար-
կաւագ։ Ողջոյն տան քեզ կատա-
նոս ասպնջական իմ, և ընտանիք նորա
քոյր իմ, և սիրելի որդիք նորա։
Ողջ լեր յա՜մ ժամ ի Ք՜Ս Յ՜Ս,
հոգւով և մարմնով։
Աղէ՛ եղիցի տեսանել զքեզ
ինձ ժառանգորդս պսակի
ի Ք՜Ս։ Շնորհք ընդ
քեզ Ամէն։

Ի Տարսոն Քաղաք.

Պօղոսի. Ա.

# ՏԻՄ ՈՐ Լ. ՐՀԱ.Օ ՎԻՆՐՑ

Սեպհական եկեղեցւոյ ի քս. որ ծանի փառաց արժանի յիշատակի որ ծանի սիրոյ. որ է ի Տարսոն.

Ողորմութիւն և խաղաղութիւն այ հօր և տն մերոյ յսի քսի բազմացի յամ ժամ,

Շնորհօք մինչև ի հռովմ Է գա—

զսնս մարտնչիմ. և եթէ ոչ կերեալ
լինիմ. գիտասջիք զի յորժամ կամե-
ցաւ Տ՟ր աշակերտունց զիս դանիելի.
Բայց ի հպարտութենէ ումանց անհան-
դարտ գազանն որ բնակեալ է ի նմա.
և յամ՟ ժամ մրրկէ և հարկանէ զիս.
Սակայն ես ոչ և զմիոյ ինչ չարի առ-
նեմ բան, զի ոչ է անձն իմ ինձ պատ-
ուական կամ սիրելի, մանաւանդ
իբրև զՏ՟րն իմ.

Այսպէս պատրաստ եմ առ սուր և
առ հուր՝ առ խաչ. և առ գազանս.
միայն թէ զՔ՟ս տեսից զփրկիչն իմ
և զՏ՟ն իմ որ վ՟ն իմ մեռաւ.

Արդ աղաչեմ զձեզ ես կապեալս ի
Ք՟ս. որ յերկիրս և ի ծովու հալա-
ծիմ. Կացէք հաստատուն ի հաւա-
տըս և ի ճշմարտութիւն. քանզի ար-
դարն ասէ ի հաւատոց կեցցէ. և
անշարժ կացէք. քանզի ասէ որ բը-
նակեցուցանէ զմիակրօնս ի տան.
Իմանամ թէ ումանք ի սպասաւո-
րաց սատանայի, կամեցան պատրել

զձեզ որքանն թէ Յս կարծեօք
ծնաւ. և կարծեօք չարչարեցաւ և
խաչեցաւ. Այս ասենք եթէ ոչ է որ
դի արարչին և ոչ ինքն արարիչ. և
ոչ Աձ ՚ի վրյ ամի.
Այս ասենք սուտ մարդ զնա ասեն.
Այս ասենք ասեն եթէ մարմինս այս
ոչ յառնեն. և պարտ է ՚ի կեանս յայս
փափկութեբ վայելել.
Ով ի այժմ են վախճան բարեացն.
և յետ ոչ ինչ բազում ժամանակի ա
պականեն. և այսպիսի մեծութիւնն
չարեաց թանձրացաւ.
Բայց զձեզ գիտեմ, զի և ոչ մի ժամ
հնազանդեք նց. քանզի որդիք էք
քաղաքին Պօղոսի. և աշակերտք այ
նորմ որ յերուսաղեմէ մինչև ցիւրի
կոս ելից զաւետարանն, և բերէր
՚ի մարմնի իւրում զվէրսն Քսի.
Ով որ եթէ յիշէք ճանաչէք ամենե
ւին եթէ Յս տր մեր ճշմարտապէս ՚ի
կուսէ ծնաւ. և խաչեցաւ.
Նա ասէ քաւ լիցի պարծել. եթէ

 ոչ

ոչ ի խաչ տն մերոյ Յսի Քսի.
Զի ով եղև ստուգապէս ի կնոջէ
և չարչարեցաւ և խաչեցաւ. և մե-
ռաւ՝ այսպէս և յարեաւ իշխանութբ
աստուածային պտուղն ննջեցելոց.
Որ մեռաւ ասէ միանգամ մեղացն. և
որ յարեաւ կենդանի է այ.

Գլուխ Ի.

Եւ եթէ ոչ. զինչ պետք են
կապանքս. մինչ չէ մեռեալ Քս
և յարուցեալ. Զի զինչ օգուտ է
համբերութիս. և կամ զինչ արդիւ-
նաւոր են մեզ հալածանքս.
Զի ընդէր Պետրոս խաչէր. և Պօ-
ղոս և Յակոբոս սրով գլխատէին.
և ստեփաննոս քարկոծեալ լինէր ի
տիրասպան հրէիցն.
Բայց և ոչ մի ոք յայսցանէ թափուր
վարձատրեցին. Այլ ճշմարտապս Քս
խաչեցաւ ի չարաց ամբարշտացն. և

 որ

որ ծնաւ ի կուսէն որդի այ՟ է, և որ
խաչեցաւն անդրանիկն ամ՟ արարածոց,
և Ած՟ փառաց. և նովաւ արար զամ՟ ինչ
Ած՟ հայր.
Ասէ մի է Ած՟ յորմէ ամ՟. և մի Տր՟
Յս՟ Քս՟ որով ամ՟. և դարձեալ թէ
մի է Ած՟ և միջնորդն այ՟ և մարդկան
որդին մարդոյ Յս՟ Քս՟.
Որով ամ՟ եղև որ ինչ յերկինս և
որ ինչ յերկրի. երևելիք և աներև
ոյթք. Նա է մշտնջենաւոր Ած՟ ի
վր՟ ամ՟ երկրի.
Այս ինքն որդի ասաց թէ ելանեմ
ես առ հայրն իմ և առ հայր ձեր, և
Ած՟ իմ և Ած՟ ձեր.
Այս նորին առաքելոյն ասէ թէ՝ յոր
ժամ հնազանդեսցի նմա ամ՟. յայն-
ժամ և ինքն հնազանդեսցի նմին՝
որ հնազանդեցոյց նմա զամ՟.
Ապա ուրեմն ոչ է սոսկ մարդ. ո-
րում հնազանդի ամ՟. և յորոյ ձեռ-
ամբն եղև ամ՟.
Նաև արդ որոյ մարդոյ պատուականքն ա-

 ասոյ

սացէ անձն թէ նիստ ճաշել իմն.
կամ զիւրորդ ասէր թէ յառաջքան ըզ
լինելն աբրահամու եմ ես. և փառա
ւորեա զիս հայր փառօքն զոր ու-
նէի առ քեզ նախ քան զլինելն աշխի.
Հրց. որ մարդ իշխէ ասել եթէ
յերկնից իջեալ եմ. և ոչ ելի առնել
զկամս իմ. այլ զկամս այնորիկ որ
առաքեացն զիս.
Հրց. վս. որո՞յ մարդոյ ասացեալ է.
եթէ նա է լոյսն ճշմարիտ որ լու-
սաւոր առնէ զամ մարդ եկեալ յաշխ.
Հրց. եթէ յաշխէր. և աշխ նովաւ ե-
ղև. և որ ի կարգին է.
Հրց. որ այսպիսին է նա՝ մարդ իցէ
սուտ. և կամ ի Մարիամայ եղև ըս
կերպըն եղելութեան նորա.
Ո՛չ՝ այլ խոնարհեցուցանէր առ ա͞ծ. և ա͞ծ
բան. և որդի միածին և որ զկնի.
Հրց. վս զօրութեն մարմնոյ մերում
ասէ, ամէն ամէն ասեմ ձեզ եկես-
ցէ ժամանակ որում ամենն որ ի գե-
րեզմանս իցեն. լուիցեն ձայնի որդ-



ւոյն

Հոյն Տյ. և եկեսցեն արտաքս և որք
լուծցենն կեցցեն:

Նշ՟ առաքելն պօղոս ասէ թէ պարտ
է ապականութեան այսմիկ զգենուլ
զանապականութիւն, և մահկանացուիս
զանմահութիւն և զի արժանի է սրբու-
թեամբ. և արդարութեամբ կեալ ասէ.

## Գլուխ. Գա.

Մի խաբիք՝ ոչ շունք, ոչ իգա-
ցեալք, ոչ արուագէտք, ոչ
պոռնիկք, ոչ թանձարկուք, ոչ գողք,
և ոչ արբեցողք զարքայութիւն Այ ոչ
ժառանգեն: Այլ եթէ մեռեալք ոչ
յառնեն՝ ապա և Քս չէ յարու-
ցեալ՝ ընդունայն է քարոզութիւնս մեր
ընդունայն են և հաւատք ձեր՝ և տա-
կաւին ի նմին մեղս կայցէք.
Այլ արդ որ ննջեցին ի Քս կոր-
եան արդեօք. եթէ այսու կենօքս
միայն եմք յուսացեալ ի Քս՝ ապա ո-
ղորմելիք եմք քան զամ մարդիկ

 Նշ՟

Այլ եթէ մեռեալք ոչ յառնեն կե-
րիցուք արբցուք քանզի վաղիւ մե-
ռանիցիմք։ Այլ եթէ այդ այդպէս
իցէ իմ՛ արդեօք եմք մեք զատ-
եալք յիշոց կամ 'ի շանց։ որ ոչ
ունին փոյթ քան եթէ ուտիցեն։ և
յետ կերակրոյն ապականին և ոչ
յառնեն։ Արդ ուրախ եմ վս՟ ձեր
'ի տ՟ր։ այսուհետև արթուն կացէք։
և 'ի բաց արարէք 'ի ձէնջ զա՟մ շռայ-
լութիւն։ և զգազանաբարոյութիւն։
և զարտմտութի՟։ և զզրպարտութի՟։
և զստաբանութի՟։ և զծաղրածութի՟։
և զհպարտութի՟։ և զարբեցութիւն։
և զագահութի՟։ և զարծաթսիրութի՟։
և զանափառութի՟։ և զնախանձ։ և
զա՟մ չարութիւն։
Այլ զգեցարուք զտ՟ր Յ՟ս Ք՟ս, և
ցանկութեան մարմնոյ խնամ մի՛ տանիք։
Քահանայք հնազանդ լերուք եպիս-
կոպոսի, և սարկաւագունք քհնյից,
և ժողովուրդք սարկաւագաց։
Անձն իմ եղիցի փոխանակ այնոցիկ

ոյք պահեն զբարս կարգաւորութեան
զայս, և Տր̃ եղիցի ընդ ձեզ զոր հա-
նապազ: Արք սիրեցէք զհաղորդա-
կիցս ձեր. Կանայք հնազանդ լե-
րուք ընծակցաց ձերոց.
Մանկունք պատուեցէք զհարս ձեր.
Հարք սնուցէք զորդիս ձեր Ածային
խրատու. Զկուսանս պատուեցէք
իբրև զդստերս ուխտի Ածն. և զորս
որբասէր այրիքն իցեն իբրև զտա-
ճար Այ. Տեարք խնամակալութբ̃
հրամայեցէք ծառայից ձերոց. և
դուք ծառայք երկիւղիւ պաշտե-
ցէք զտեարս ձեր.
Այլ մի ոք ՚ի ձէնջ խափան կայցէ զի
խափանումն մայր է կորստութեան.
Զայս ոչ եթէ հրաման տամ իբրև
թէ իցեմ ինչ թէպէտ և կապեալ ի-
ցեմ. այլ իբրև զմի ոք ՚ի ձէնջ յի-
շեցուցանեմ:
Տր̃ Յս̃ Քս̃ եղիցի ը̃ ձեզ. եղբարք
և դուք ամենեքին աղօթս արարէք
ինձ զի զՔս̃ ժառանգեցից.

 Յան

Յանձն առնեմ ձեզ զեկեղեցին Ան-
տիոքայ. Ողջոյն տամ ձեզ եկեղե-
ցիք ասիացէոց. և Պօղիկարպոս մար-
դըն այ, որում յանձն արարից զե-
կեղեցին ասորէոց:

Ողջոյն տայ ձեզ եկեղեցէն Փիլիպ-
պեցոց. ուստի և գրեմս առ ձեզ:
Ողջոյն տայ ձեզ Փիլոնն սարկա-
ւագ. զորոյ յոյժ գոհանամ զի մե-
ծաւ փութով սպասէ զիս յամ ժամ.
Ողջոյն տայ ձեզ Ագաթոփաս սարկա-
ւագ. որ յասորէոց հաղորդ եղև
ինձ ՚ի քս. Ողջոյն տուք միմեանց ՚ի
համբոյր սրբութեան.
Ողջոյն տամ ամենեցուն որ ՚ի քս
էք. Ողջ լերուք մարմնով և
հոգւով և մտօք և զիս մի մո-
ռանայք յաղօթս ձեր.



Ը՟ս սուրբին Մարկոսաւետ.

Գլուխ. Ա.

# ԻԹԸ Ս.

ՏԻԱՍ ՈՐԴԻ Ա Ն ՅԻՆ Ո ԳԻՆԱ·

որ է Ս՟Ն՟Ձ՟ուրին. զԹագեմ մարգարէիւ քննազգեաց ծննդեան որդւոյ մերոյ հաւատով և սիրով Սուրբին Մարկո սացի Պ՟ետի և աշակերտի նոյ.

Շնորհք ողորմութիւն և խաղաղութիւն ընդ ամենեսեան և ի Յ՟Ս՟ու

Րանէ ձենէ մերմէ բազմացի.

Ո՜ միածին որդին մայ. որ եւս զանձն իւր փոխանակ մեղաց մերոց. եւ փր- կեաց զմեզ յՃես յայսմանէ չարէ եւ հրաւիրեաց յարքայութիւն երկնից.

Ո՜ նա աղաչեմ առաւելուլ ի շնորհս քո, եւ զքեզ աղաչեմ առաւելուլ ընթացս քո. եւ փութալ ի հաւա- տարութիւն բանից սրբոցն. զտկարու- թիւն տկարաց բառնալ. ո՜վ զի կա- տարեսցես զօրէնսն Քրի:

Պահոց եւ աղօթից սովոր կաց. բայց մի՛ անչափ. զի մի՛ դու ինքնին դը- լեսցես զքեզ.

Ի գինւոյ եւ ի մսոյ մի՛ ամենեւին զարշ համարելով հեռացիս, այլ ըստ ժամա նակի վս պարկեշտութեան.

Ո՜ ի ոչ եթէ զարշելիք են այնոքիկ, քանզի զբաղութիւն երկրի սակ կե- րիջիք. եւ ուտիցէք զմիս իբրեւ ընդ- դալարի. եւ գինի ուրախ առնէ ըզ- սիրտ մարդոյ. եւ իւղ զուարթ. եւ հաց հաստատէ.

Բայց ըս՟ չափու. և ըս՟ կարգի. և ըս՟
կամացն Այ՟.

Եթէ ով արդեօք ուտիցէ կամ ըմպի-
ցէ. թէ ոչ նուազէ՝ զի ամ՟ բարին նո-
վաւ է և ՚ի նմանէ է.

Միտ դիր ընթերցուածոց սբ՟ գը-
րոց, և ոչ միայն դու գիտասցես զը-
րենս այլև այլոց ուսուսցես.

Օ արթիր իբրև զբարուոք զինուոր
Քի՟ զի թէ ոք զինուորի և ՚ի տու-
ուենս վաճառականութե՟ աշխ՟իս կապի.
եթէ կարիցէ թագաւորին հաճոյ
լինել. և եթէ ըս՟ օրինացն ոչ պատե-
րազմի՝ ոչ պսակի.

Սպասեալ անձն իմ փոխանակ անձին
քո. և եթէ ոք ասիցէ քեզ աւելի
քան զոր ընկալար,

Անպէտ և յոյժ հաւատալի երևես-
ցի, թէ՝ կամ պահօք իցէ կամ կոյս,
կամ թէ՝ նշանս առնիցէ, կամ թէ՝
մարգարէանայցէ, իբրև զգայլ տես
զնա ՚ի մորթս ոչխարի թագուցեալ
ապականիչս հօտի Քի՟.

Եթէ

Յէ՛ եթէ ոք զխաչելութիւն ուրա-
նայ․ և զչարչարանսն ամօթ համարի,
եղիցի քեզ իբրև զհակառակորդն։
Թէպէտ և զինչս իւր աղքատաց
բաշխեսցէ, կամ թէ զմարմինս փոխա-
խեսցէ․ կամ թէ զանձն իւր յայրում-
տացէ․ և եթէ ոք խոստովանէ զօրէնսն
կամ զմարգարէսն․ զոր Քս ելից
և կատարեաց, եղիցի քեզ իբրև
զանօրէն քրիստոս նեռն։
Լէ՛ եթէ ոք սուտ մարդ ասէ զՔս,
նա և հրեայ է, և Սատանայն։

Գլուխ․ Ի․

Զ...որիսն պատմեա ուր ճշ-
մարիտ այրիք իցեն։
Հայեաց և յորբս․ զի Քս հայր է
որբոց և դատաւոր այրեաց։
Մի՛ ինչ գործեսցես առանց եպիս-
կոպոսի և երիցանց․ նոքա քահանայք
են․ և դու սպասաւոր նց։
Նոքա մկրտեն և ձեռնադրեն և

 քա

քահանայագործեն. եղաւ նոցին
սպասաւորեսցես. որպէս եւ տէրն Ստե-
փաննոս Յակոբու եղբօր տն յէմ.
Զժողովս մի՛ արհամարհեր. եւ մի՛
ոք զքո մանկութիւն արհամարհեսցէ.
Օրինակ լեր հաւատացելոց բանիւք
եւ գործովք. մի՛ խոտան համարիր
զծառայս, քանզի հաւասարակից է բն-
նութիւնն մեր եւ նոցա.

Մի՛ գարշիր 'ի կանանց. զի նոքա
ծնանին եւ դարմանեն զմարդիկ. եւ
սիրել պարտ է զպատճառս եղելու-
թեանս. Բայց միայն տէրամբ. զի
եւ ոչ այր առանց կնոջ եւ ոչ կին առանց
առն: Մարմինն Նամանայ 'ի չորրից
նիւթոց էր. եւ 'ի կողէ նոր Եւայ՝
եւ փառաւոր ծնունդն տն՝ 'ի կուսէն
միայն.

Ոչ է գարշ օրինաւոր ամուսնութիւն
զառնալն 'ի շնութէ, այլ Ածաղքանչ
եղելութիւն.

Քանզի այսպէս կամեցաւ արարիչն
չմարթել զա առաջինն եղելութեան, այլ
'ի

Ի փառս իւր եւ զայս անօրինեաց ամ̄
արարիչ։
Ի հպարտութե̄ փախիր. քանզի է
դէմ հպարտաց Ած̄ զօրանայ, զստա-
բանութի̄ ատեա, քանզի կորուսանէ
տ̄ր զայնոսիկ՝ ոյք խօսին սուտ։
Պահեա զանձն քոյ ի չար նախանձ-
ուէ. զի գլուխ ն̄ր սատանայէ եւ ըն-
դունիչ կայէն։
Ո քոյս քո ուսա՛ սիրել զն̄ր եւ բա-
ժանեան լեզին յորս իւրեանց. նոյնպէս
եւ զեղջուրս քո՛ շահել զլծակիցս իւ-
րեանց։ Ո կուսանս ուսա՛ պահել
զինքեանս ամ̄ սենեակս ք̄ի։
Երկայնամիտ լեր զի լիցես
իմաստուն։

## Գլուխ. Գ.

Մաղքասս մի անտես առնել
զի ողորմութե̄ քաւին մեղք·
պահեա եւ զքեզ ինքն մաքուր յամ̄
ախտէ. զի ա̄յ աշակերտս ես եւ տաճար

քո՛ն, և քնար հոգւոյն մերյ.
Գիտես թէ որպ՟ սնուցի զքեզ. և
թէպէտ և նուաստեմ նախանձաւոր
լեր ինձ. և նմանեա զնացից իմոց.
Ես ոչ պարծիմ ինչ յանձն. այլ ի տէր
իմ յս՟ քս՟. և զորդս իմ ուրիոն ու–
սուցանեմ, քանզի որ պարծին ասէ
ի տէր պարծեսցին.
Խրախճանամ ի մանուկ իմ ցանկալի.
զոր պահեաց ծնեալն Յս՟ յս՟ քս՟.
Ան ամ մարդոյ հաւատարք. և մի ի
մարդ յուսար, բաղում են պաշտօ–
նեայք սատանայի, և որ դիւրաւ
հաւատայ նդ՟ տկարամիտ է.
Յիշեա զՅս՟ և ոչ մեղանչես յաւի–
տեան. յաղօթս մի երկմտիր, քանզի
երկմտեալն է որ կցորդ է նմա և ոչ
բաժանի.
Հաւատամ ի հայր տն՟ մերոյ յս՟ի
քս՟ի. և ի միածին որդի նր՟, որ
ազդեաց ինձ զուրբերոն վերընկալ–
աթոռոյն իմոյ.
Որդի՛ առաւելեա զընթացս քո որ

 դեալք

դիւաց, պատուիրեմ քեզ առաջի ա՟յ
հօր եւ յ՟սի ք՟սի եւ հոգւոյն ս՟բյ.
Պահեա զաւանդն իմ զոր ես եւ ք՟ս
աւանդեցաք քեզ, եւ մի դատեր զքեզ
ինքն անարժան. որում եւ ա՟յ հաճոյ
իսկ ես.
Յանձն առնեմ զքեզ եւ զեկեղեցին
անտիոքացւոց պօղիկարպոսի ի տէ՟ր
յ՟ս ք՟ս.
Ողջոյն տամ քեզ եպիսկոպոսաց, ոնե-
սիմոս. պիտոս. դիմոս. պօղեքես.
եւ ա՟մ փիլիպպեցիք ի ք՟ս, ուստի եւ
գրեցի քեզ.
Ողջոյն տուր Լ՛ծաղորդ քահանայից
եւ սրբասէր պաշտօնէից որ ը՟ քեզ
են. Ողջոյն տուր ժողովրդեան ա՟ն
ի փոքրկանց մինչեւ ի մեծամեծս.
զոր յանձն առնեմ քեզ իբրեւ Մով-
սէս Յեսուեայ որ եղեւ զինուց նո՟ց զօ-
րապետ ժողովրդեանն.
Լա՛ մի՛ համարիր խստագոյն զոր ա-
տացիսս զի Թէպէտ եւ ոչ եմք իբրեւ
զն՟ս. բայց աղօթեմք լինել. քանզի

Եւ մեք որդիք եմք Աբրահամու.

Օ՛ զօրացիր ո՛վ սուրբին կատարելութ̃ եւ քաջութե̃. զի յայտնեցաւ դու արամես եւ հանես զժողովուրդս տն որ յանտերը եւ ոչ մնայ հօտ տն երբեք զոչխար որոց ոչ իցէ հովիւ.

Ողջոյն տուր կիսախանութե տապանձայանի իմուամ. եւ պատուէեալ լծակցի նր. եւ անիծեցեալ մանկանց նր. որք գտցեն զողորմութի ՚ի տնէ յաւէուրն յետնում. Ըս պաշտաման մերում. զոր եւ քեզ յանձն առնեմ ՚ի քս.

Ողջոյն տուր հաւատացելոց որ ՚ի լաւէողքիկեայ, եւ մի՛ անփոյթ առներ զորս ՚ի տարատնեն. այլ աշխատակիրութե̃ տես եւ զնուս. եւ սոռուցես նոցա զքաղցրութին.

Ողջոյն տաս մաւնիանութե եպիսկոպոսի որ ՚ի նիկոպոլիս. մերձ առ դերջիս գետ. Ողջոյն տուր եւ Մարիայ դստեր մերոյ յոյժ իմաստնոյ, եւ առ տնին եկեղեցւոյ նորա, որոյ փոխանակ եղիցի անձն իմ.

Նայեաց և առ երկնիւղազարդ կա-
նայս. և դու ով Տէր պայծառաց-
եալ յամ գործս բարիս.
Աջն պահեսցէ զքեզ Հայր միածնի
յիսուսի քրիստոսի ընդ երկայն
ժամանակս առ ՚ի յօգտակարու-
թիւն եկեղեցւոյ. ով Տէր
՚ի տէր. և փառն իմ առ-
թեա զի կատարեցայց.



Առ Փիլիպպեցիս թուղթ։

Գլուխ. Ա։

# ԻՊՆՍ

## ՏԻՄՈ ՈՐԴ. ԱՇԽՕ ԳԵՐՑ,

Եկեղեցւոյն այս. որ գծագրեալ հա-
ւատով. եւ համբերութեամբ եւ սիրով
առանց կեղծաւորութեան. որ է ի Փի-
լիպպէս։ Ողորմութիւն եւ խաղաղութիւն
յայ հօրէ. եւ ի տեառնէ մերմէ յիսու-
քսէ։ Որ է փրկիչ ամ մարդկան եւ
առաւել հաւատացելոց։

 Յոր

Յորժամ յիշեմ զսէր ձեր եղբայրք
որ ի Քս̃ զոր ցուցէք առ իս. բայ_
ձաք համարեցայ գրել սիրոյդ ձե_
րում որ յԱյ մարդասէր. առ ի յի
շել զձեզ և զընթացս ձեր որ ի Քս̃.
Զնոյն ասեմք ձեզ. զի ոգ̃ և եղբք
հաւասար հոգւով. զնոյն խորհես_
ջիք զմիաբան բանն կանոնի առաքինու_
թեան. ոգ̃ և ուսոյց ձեզ երանելին
Պօղոս. Զի է եթէ մի է Այ ամ̃ի
հայր քս̃ի յորմէ ամ̃. մի է և տր̃ մեր
յս̃ քս̃ միածին որդի ա̃յ որոյ ձեռաբն
է ամ̃. Մի է և հոգին ս̃բ. որ խօ_
սեցաւ ի Մովսէս և ի մարգարէսն
ամ̃ և յառաքեալսն.

Մի է և մկրտութիւն որ մաքրութեամբ ս̃ն
պարգևէ, մի է և ընտրեալ եկղ̃ցի.
Այս ուրեմն [illegible] ձեզ լինել
մի. և հաւասար որ ի Քս̃ի.
Կանգնի մի է տր̃. և մի հաւատ. և
մի մկրտութիւն. և մի Այ. և հայր ամ̃ի
և ի մէջ ամ̃ի և յամենեսեան.
Մէջ երկնուս. և ոչ երկիս. այլ մի որ



երն

երն են. և չէք ինչ առանց նր՟. որ
է միայն Ճշմարիտ։

Տէր Ա՟Ծ՟ քոյ այն տր՟ մի է, և դարձ եալ եթէ մի հայր ստեղծ զմեզ. և մի հայր է այն ամենեցուն։

Այլ և որդի բանն Ա՟Ծ՟ միածինն այն որ էն ի ծոց հօր. և դարձեալ եթէ մի տր՟ Յս՟ Քս՟. և որ ի կարգինն է և մի է մխիթարիչ հոգին սր՟.

Այլ և այն հոգին սր՟ ոտ՟ և կոչեցայք ի մի յոյս կոչման ձերոյ, և դարձեալ եթէ զմի հոգի արբաք.

Ա՟ց՟ այսուհետև զիմանալի պարգևս գործէ նոյն ինքն հոգին, ոչ եթէ երիս հայրս, կամ երիս որդիս. կամ երիս մխիթարիչս, այլ մի հայր. մի որդի. մի մխիթարիչ հոգի։

Ա՟ս՟ այսորիկ և տր՟ մեր. յորժամ առաքէր զաշակերտսն աշակերտել զամ՟ հեթանոսս, հրաման ետ նոցա մկրտել յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ՝ ոչ ի մի երիս անուանս այլ յերիս հաւասարապատուիւս.

 Այլ

Մի է որ մարմնացաւ. ոչ հայր եւ ոչ
հոգին, այլ որդին միայն. ոչ կարծեօք
եւ ոչ առաչօք.

Այլ ճշմարտապէս բանն մարմին ե-
ղեւ. եւ իմաստութիւն շինեաց իւր
տուն. եւ ծնաւ իբրեւ զմարդ մարմ-
նով, ի կուսէն Այ բանն առանց հա-
ղորդութեան առն.

Նոյն եբարձ յորովայնի եւ ծնաւ
որդի. Ճշմարտապէս ծնաւ. ճշմար-
տապէս աճեաց. ճշմարտապէս եկեր
եւ արբ. ճշմարտապէս խաչեցաւ եւ
մեռաւ. եւ թաղեցաւ եւ յարեաւ.

Արդ որ այսպէս հաւատայ որպէս
եւ եղեւ. երանելի է նա.

Իսկ որ ոչ այսպէս հաւատայ՝ դա-
տապարտեալ է. եւ չէ ընդ հօտ ի
խաչահանուացն. այլ եւ ու-
րացող իսկ է.



Պօղոսի

## Գլուխ. Բ.

Արդ իշխան Տիս ուրախանայ յորժամ ուրանայ զք ընդ-խաչն. քանզի կորուստ իւր համարի զհաճատայն ի խաչն.

Սա է նշան յաղթութեան ընդդէմ զօրութե̃ն նր̃. զի յորժամ տեսանէ՝ սարսէ. և յորժամ լսէ՝ երկնչի.

Նաև յառաջքան զկանգնել խաչին փութայր այսպէս առնել և գործէր յորդիս անիրաւութե̃. ք̃ ի հրէայսն.

Նոյն յորժամ հանդերձեալն էր լի-նել. զարհուրէր. և ի յուսահատու-թիւն արկանէր զմատնիչն. և զորո-գայթն ցուցանէր նմա. և զխեղդումն ուսուցանէր նմա.

Երկեցուցանէր և զկինն Պիղատոսի և երազով խռովեցուցանէր զնա, և ջանայր խափանել զխաչն.

Նաև և զա̃մ ապականութի̃ շարժէր առ ի պատրաստութի̃ իւր, ոչ է-



թէ

Թէ առ 'ի զղջանալ այնոցիկ հար-
ւածոյն՝ այլ զի իմանայր զկորուստ
իւր. Ահա՛ արդ քանզի սկիզբն դը-
տաւ՛ նորա պարտաւորութեան և
կորստեան խաչն Քի։

Ա՟ծ այնորիկ գործէ 'ի մարդիկ առ-
բանալ զխաչն. և գայթակղել 'ի չար-
չարանսն և կոչել զմահն 'ի կարծիս.
և հաստատել զծնունդն 'ի կուսէն. և
զբնութիւն մարդ համարել.

Ահա՛ այսու ամ՟բ օգնական են այն-
պիսիքն հերետիցն՝ յուրացուցիչ խաչին.
և հեթանոսացն՝ 'ի զրպարտութի կա-
խարդութեան. և հերձուածողացն 'ի
կարծիսն. Խորագէտ է բանսարկուն
և գլուխ չար զինուորութեան.

Գողանայ զմիտս անհաստատաց, և
յորժամ այլ և այլս արկանէ 'ի նա.
և այլ և այլս ցուցանէ, ապա իմաստա-
սիրէ գործել զչարն.

Ո՛ բարին բնաւ՛ ոչ գիտէ. այլ և
լի է անարգութ̅ք. վ՟ս կամաւ՛որ մո-
լեգնութեանն իւրոյ.

Այլ զխորհուրդ ոչ է այսպէս որ զգործսն
Քրիստոսի զրպարտէ.

Իսկ եթէ սոսկ մարդ է Քրիստոս ՚ի հոգ-ւոյ և ՚ի մարմնոյ. ընդէ՞ր հաստանեա
զելնելութիւն հաւասար մարդոյ.

Ընդէր իբրև զսքանչելի ինչ որ ե-ղև ՚ի մարդիկ զչարչարանսն կարծիս կոչես. և զվերապարանսն մահկանաց-
ուի փառս համարիս.

Իսկ եթէ Աստուած է և մարդ որ միաւո-րեցաւ և եղև մի յերկոցունց. ընդէ՞ր անօրէնս կոչես զնորին փառաց որ է բնութիւն անբաժանելի և անփոփոխե-լի, ընդէ՞ր անօրէնս ասես զօրէնս-դիրն. Բանն մարմին եղև, բանն մարդացաւ, բայց ոչ ՚ի բնակութիւն ինչ. այլ ՚ի միաւորութիւն որ ՚ի սկզբանն ըս-տեղծ զմարդ, զիմանալի և զերևելի ա-
րարածս կամաւ հօր.

Որդ ՚ի մարմնանալն զմեզ հերձանդու-թեանս. և զախտաժետութիւնս եղծ. զխարդ ասես սոսկ մարդ մի բանսար-կու. այնմ որ զմեռեալս յարոյց. ըզ

բուրաստան սրբելոց զհոգիս բուսածո-
թեաց. և զորս հրամի փոփոխեն և անձն-
ուցանեն իբրև զջուրն 'ի գինի. և
զհինգ նկանակսն և զերկուս ձկունսն.
Այլ զշնորհօ՛րութիւն քո զմե՛ծ բանիւ
փախուցանէ. Ընդ այս չար զբնու-
թեան կուսին և զպատուա՛կան ան-
դամն գարշ հոտես.

Ոչ յառաջագոյն զպատուիկ շարժեիր
յայտնել և խոստովանել հրաման տայ-
իր. զարթուն 'ի յերգսն փոխանակել
և զերգսն յանօրէն ցանկութի՛ աղ-
ռե՛աց. զպատուիկ բարուոք համարիս.
և իբրև 'ի պարկեշտս խրախճանս.
Ով դու հոգի մոլորութե՛ն և պոռն-
կութե՛ն եթէ յանժամ բարի իցէ ե-
ղեւ. յորժամ յանօրէնութե՛ն և աղ-
տեղութե՛ն վարեցին. և այժմ որ ոչ
գոյ մեղք գարշ իցէ կամ խոտան, ոչ.
այլ մ՛մ լինէ բարի և գովելի. Այլ դու
յորժամ անուանես՛ չար աւելս զնա. և
զիւրոյ ոչ տակաւին համարիս զմ՛ զմ՛
'ի կուսեն մ՛մ 'ի մ՛ մ՛ ամենայն.

## Գլուխ. Գ.

Արդ տաս ինձ ո՞վ առաքեաց ըզ-
նա, ով վկայեաց զնմանէ թէ
ո՞վ է. ում կամաց հնազանդեցաւ նա.
որոց օրինաց եղև նա կատարիչ. ո՛չ
կամաց մարդոյ և իշխանութեց հնա-
զանդեցաւ. այլ հօր իւրոյ.

Դու զքեզ որ ծնաւ ՚ի մարիամայ,
յո՛չ ծնելութէ առանց ծննդեան
դնես զօրէնս եզականութեան. և ՚ի
խաչին բևեռես զգլուխն անձին
և զպայմանիկ թույլ տաս ինձ ասել.

Հանգի ո՛չ եմ ես մոռացեալ զշըր-
ջապատումն իրացդ. և թէ իւր ինչ կամ
խոստովանակ գնացս ունիմ, այլ դու ես
մոռացեալ և խոստորեալ.

Իսկ ո՞վ է ծնեալն տաս ինձ. դու պար
ծիս թէ զո՞մ ինչ գիտես. բայց ըզ-
բազումս մոռացեալ ես.

Ո՛վ կուսութիւն մարիամայ յետ ծնն
դեանն. զասաղն որ առաջնորդեաց

որոց յարևելից եկին պատարագօք ։
Ո՜վ աւետիս հրեշտակապետին առ-
կոյսն. զքարոզութի՟ յառաջընթաց
կարապետին ։

Ո՜վ խայտալն յորովայնի ծառային,
Է̅ առաջ տ̅ն յորովայնի կուսին. ըզ-
փառաբանութի՟ն հրեշտակացն, վ̅ս
ծնիցեալ մանկանն. զքարոզութիւն
հովուացն. զզարհուրումն հերով-
դեի վ̅ս բառնալոյ թագաւորութեն
եւ զի հրաման ետ կոտորել զման-
կունսն. Ո՜վ փախչելն յեգիպտոս. եւ
անտի աստ դառնալն. զմանկաբարձ
խանձարուրսն. զմարդկապէս գլխա-
դիրն, զմսուրն զի ոչ գոյր ն̅ց տեղի
եւ ոչ պատրաստութի՟ իւնչ մարդաբնակ ։
Ո՜վ կաթնաջամբ լինելն. զաճիլն հա-
սակաւ. զըծանսն մարդկօրէն. զքաղցն.
զծարաւն. զվաստակելն ՚ի ճանապար-
հին. զմատուցումն պատարագացն.
զթլփատելն. զմկրտելն. զձայնն հօր
վ̅ս մկրտելոյն. թէ ով է կամ ուստի ։
Ո՜վ վկայութի՟ն ա̅յ վ̅ս այսորիկ որ ՚ի-


վե

վերուստ էր․ զմարգարէութի՟ն յով
հաննու գառն անուանելով․ ընդ-
պէս պէս նշանագործութի՟ւն ընդ-
գովելի բժշկութի՟ւն․ զորիրապէս
սաստելն ծովուն․ զայսոցն պղծոցն
հալածումն․ Որդ դու միայն ես խո
տորեալն և տագնապիս․ և ոչ գիտես
թէ զինչ գործես զայս ա՟մ տեսեալ
քոյ անարգես․

Այ՜ եթէ կոյս ծնաւ մոռացեալ ես․
և ոչ զարմանաս է՟ փառաւորանութի՟ն
հրեշտակացն․ է՟ երկրպագութի՟ մո-
գուցն․ է՟ ծագումն աստեղն, այլ
անգիտանաս վ՟ն խոնարհութեանն․
Փոքր ինչ տեսանես զխանձարուրսն
զմսուրն զթլփատութի՟ն․ զկաթամբ
սնանիլն եթէ ոչ են արժանիք ա՟յ․
Այլ տեսեր զմարդն որ զի՟ս տիե և
զի՟ս գիշեր առանց ճաշակմանն կերակ
րոյ եկաց․ և զհրեշտակսն որք պաշտէ
ին զնա և զարհուրեցար․

Այ՜ իբրև յառաջադոյն տեսեր․ զի
իբրև զմարդ մկրտեցաւ և զպ՟տմառան


ոչ

ոչ գիտէիր. և յետ պահոցն յոր-
ժամ քաղցեաւ դու քաջալերեցար.
Այլ մատուցեալ փորձէիր զնա իբ-
րև զհասարակաց մարդ. և ոչ գիտա-
ցեր թէ ով էր նա. զի ասացեր ե-
թէ որդի ես ա՟յ. ասա քարանցս այ-
սոցիկ հաց լինել:

Ո՞րդ ասելն եթէ դու ես որդի ա՟յ.
անգիտութե՟ բան է. զի թէ Ճշմարտա-
պէս գիտէիր, իմանայիր արդեօք զա-
րարիչն զայն որ զոչ գոյսն ՚ի գոյութի՟-
ած. և զգոյսն փոփոխեաց ոպ՟ և կա-
մեցաւ. Այլ ոչ որովայնիւ փորձէ-
իր զյայտնեցուցիչն ամ՟ի և զտ՟րն փա-
ռաց. այլ մոռացար ՚ի չար մտաց քոց
և լուար թէ ոչ հացիւ կեցցէ մարդ
այլ ամ՟ բանիւ որ ելանէ ՚ի բերանոյ
ա՟յ. Այլ թէ գիտացեալ էր քոյ եթէ
որդի է ա՟յ, Ճանաչէիր արդեօք. թէ
որ զխ՟ օր առանց կարօտութե՟ պահ-
եաց զմարմինն, վ՟ էր քաղցնոյր, և
թէ ոչ առ ՚ի ցուցանել կամելով.
թէ Ճշմարտապէս մարմին առ ըստ

մերում բնութեանս։

Զառաջինն ադամ արար թէ Ածէ·
և յերկրորդումն թէ մարդ է· իսկ
դու անձկար ՚ի վերնայեն փառացն իբ
րև զփայլեալն· և համարձակիս առել
ցտրն քոյ եթէ արկ զանձն քո այդի
՚ի վայր· որոյ ամ ինչ կարելէ·
Այս ՚ի մանափառութի կոչես զհեզն
և զխոնարհսն· և կերպարանիս իբրու
թէ ընթեռնուս զգիրսն որ առն վմ
նր թէ հրեշտակաց պատուիրեալ է
վմ քո· զի ՚ի բազումս իւրեց բարձ
ցէն զքեզ· զի մի հարցէ ոտն քո· և
որ զինի բանն է մոռացեալ ես·
Ով մտաղող դու· որ վմ քո և քոյ-
ոցն է մարգարեացեալ· եթէ ՚ի վմ
իժի և քարբի գնասցես դու· և առ-
ոտն կոխեսցես զառիւծն և զվիշապն·
Իսկ դու որ գլուխ ես ատութն, մր
եղեր· և մարգարէքն քո դեռ չա-
րութեան· և այժմ կոխան եղեք ո-
տից ոճն դու և ամ զօրութեան քո·
Այս զոտն հրեշտակք բառնան ՚ի վմ

 մե

ձեռաց, դու զխորդ փորձես զանփորձելին. և զօրինագիրն մոռացեալ ես որ հրամայէ թէ մի փորձեսցես զՏ՟ր Ա՟յ քո.

Այլ լրբիս ով պիղծ և գործոցն Ա՟յ տնտես լինիս, եթէ քեզ տուեալ է իշխանութիւն նոցա.

Ո՜ անկանելդ քեզ անփոփոխական համարիս. և տաս նմա զիւրն խոստանաս. եթէ անկեալ երկիրպագանիցէ քեզ. Այո՛ ընդէր ոչ զարհուրեցար դու այսպիսի բան համարձակեալ ը՟դէմ տ՟ն քում. ով հոգի չարութեան և չարամիտ. և որ առաւել չարէ քան զա՟մ չարիս.

Զի ձեռն յորովայնի յաղթեցար. և ի ձեռն փառասիրութե՟ն արհամարհեցար. և ի ձեռն ընչասիրութե՟ն. և իշխանասիրութեան յամբարտաւանութիւն վարեցար.

Դու բելիար ապստամբ մնաս. պատրիչ և հեռացուցիչ յԱ՟յ. և մեկնիչ ի Ք՟սէ. և օտարացուցիչ ի հոգ-

ւոյն մէջ։ Դու 'ի դասուց հրեշ-
տակաց հեռացար. և յարարչէն մեր
ժեցար. և թշնամութի յարեար 'ի
վր առաջին ստեղծուածոյն. և արա-
րեր զնա պատուիրանազանց. և տան-
ջեցեր զայնոսիկ որ քեզ ինչ ո՛չ է-
ին մեղուցեալ։
Դու և զկայէն յարուցեր սպանա-
նել զեղբայրն. դու և ընդ Յոբայ մար-
տեար, դու և այժմ ասացեր ցՏէրն
եթէ անկեալ երկիրպագեսցես ինձ։
Վա՛յ լրբութեանդ այդ. վա՛յ ամբար-
տաւանութեանդ. ծառայ փախստա-
կան. ծառայ բազմահարուած որ ա-
պըստամբեաց 'ի բարի Տեառնէ իւրմէ։
և եթող զԱստուած ամն երևելեաց և
աներևութից. և ասէ լրբութ՝ ե-
թէ անկեալ երկիրպագանիցես ինձ։
Բայց և ինքն Տէրն երկայնմտութ
համբերեաց. և խոնարհութ պա-
տասխանեաց. եթէ երթ յետս ստնյ
յա, եթէ երթ սատանայ յորս ընտ-
րեցերն քեզ, և յորս սիրեցեր հա-

 րու

բուժեալք մեռաց քոց·

Ես գիտեմ թէ ով եմ· կամ յում_
մէ առաքեցայ· կամ թէ ուր մտանելց
երկրպագութի· տ̃ն ա̃յ քում ասէ եր
կրպագանիցես· և զնա միայն պաշ_
տեսցես· յորմէ դուն հեռացար·
Մ՛չ եմ Ես հակառակորդ այլ դո_
վեմ զբարձրեալն· և ոչ հրաժարիմ
յերկրպագութէ̃ այնմ զոր գիտեմ
պատճառ ծնելութեան իմոյ·
Զնա զնոյն ինքն գիտեմ տ̃ր բնու
թեանց· և ես կենդանի եմ մ̃ս հօր·

Գլուխ· Դ·

Ո Մ·յոսոփիկ եղբարք իմ, սի_
րոյդ ձերում հարկեցայ առ
նել ՚ի փառս ա̃յ· ոչ եթէ խցեմ ինչ
այլ իբրև զմի ոք ՚ի ձէնջ խրատ տամ·
Հնազանդ լերուք եպիսկոպոսի և
քահանայից և սարկաւագաց·
Սիրեցէք զմիմեանս տէրամբ· և հո_
գաբարձութի արարէք որբոց և այ_


րեաց·

րեաց։ Հայեցարուք ՚ի կուսանս եր-
բեւ ՚ի տաճարս այ։
Արք սիրեցէք զհաղորդակիցս ձեր. երբեւ զձեր անդամս։
Կանայք սիրեցէք զարս ձեր. երբեւ զի մի մարմին էք զուգաւորութբ։
Յաւկ եւ եթէ սրբի կամ համբերէ՝ մի՛ հպարտասցի. զի մի կորուսցէ ըզվարձս իւր։
Զտօնս մի արհամարհէք. զպահս քառասնորդացն մի՛ կոխէք. զի զնմանութի վարուց տն ունի։
Մի՛ անտես առնէք զշաբաթ չարչարանաց տն. զչորեք շաբաթս եւ զուրբաթս պահեցէք. զաւելորդս ձեր աղքատաց տուջիք։ Սփռեցէք զաղօթս ձեր ՚ի վր եկեղեցւոյն Անտիոքացւոց. ուստի կապեալ երթամ ՚ի Հռովմ։ Ողջոյն տուջիք Պօղիկարպոսի եպիսկոպոսին։
Ողջոյն տամ անբիծ եպիսկոպոսին ձերում պիդոսի. եւ քահանայից եւ սարկաւագաց ծառայակցաց իմոց.

որոց փոխանակ եղիցի անձն իմ. վս՟
զի հնազանդութիւն եպիսկոպոսի և քա-
հանայից ՚ի տր՟.

Եթէ որք Է հրէից կատարեցեր ըղ-
պասեքն. կամ զնմանութի տօնից նց՟
ընդունի. հաղորդակից է Ա՟ծասպա-
նիցն. և որոց զառաքեալսն ս՟ն կա-
տարեցին. Ողջոյն տայ ձեզ փրկի-
չն. և աղթուփօն պաշտօնեայք և
կցորդեքիմ: Ողջոյն տամ կուսանաց և
այրեաց: Ողջոյն տամ ա՟մ ժողովըր-
դեանդ ա՟յ. ՚ի մեծամեծաց մինչև ցը
փոքունս. Առաքեցի առ ձեզ զդիրս
զայս ՚ի ձեռն ովբինու ընթերցողի
որ.է այր Ա՟ծային և հաւատարիմ. որ
խօսեցայ Է նա ՚ի ժամանակին յոր-
ժամ մտանէի ՚ի նաւ.

Յիշեցէք զկապանս իմ զի կատարե-
ցայց ՚ի Ք՟ս.

Ողջ լերուք հոգւով և մարմնով.
և զկատարեալն խորհեցարուք. և ՚ի
բաց դարձուցէք զերեսս ձեր յա՟մ
գործոց անօրէնութեան և յապակա


նո

Նողաց բանից։

Սա՛ գործակարութ Ի՛շնորհացն Տյ եւ
որ, և Հ՛րն ի Ք՛րն ի և Հոգ
ւոյն սրբոյ՝ յաւէժ
առեալս յաւերժ
նից Ամէն։

## Յիշատակարան Տպագրութեան
### Առ Գրքոյս.

Ի Փառք, պատիւ, գոհութիւն, և երկրպագութիւն, ամենա սբ Երրորդութեան և միոյ Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Որ իւրով գերակատար և ամենակարող զօրութեամբն և անհուն ողորմութեամբն նա կարողութիւն մերս անարժանութեան՝ հասանիլ ի կատարումն տպագրման գրքոյս. ի թուին փրկչին 1783. և ի թուին մերում ՌՄԼԲ. մարտի ամսոյ 18.

### Ի ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԽ.
Ի Տպարանի Գրիգորեան Խալդարեանց.

Ի Յիշատակ ագուլեցի Գէորգեան Յօհանն. և Խուլմանեան Իգնատիոս ի Քս հանգուցելոց.
Ո՛վդ՝ որք հանդիպիք Այս հոգեշահ Մատենիս, յիշեսջիք ի Քս է

մաքուր մաղթանս ձեր միով հայրմեր
րիւ զվերոյիշեալ Յօհաննէս. և իզնա
տիրոսն, հանդերձ հօգևոր և մարմ
նաւոր ծնողիւք և ամ արեանառու
մերձաւորօք իւրեանց. որոց զհո
գիսն ած լուսաւորեսցէ. և որք մե
շեցէք յիշեալ լինիք ի՝ քսէ
փրկչէ մերմէ Ամէն.

Նոյնպէս յետոյ յիշեսջիք ի մաքուր
յաղօթս ձեր զմշակսն տպագրութեան,
զմ զշարաբարդօղս և զօրհնօղս կազմա
րելոյ զյօհաննէս զստեփաննոս և ըզ
մանուէլ մանկունս. և զծերաջան և ըզ
հաւատարիմ մեքենահար տիրացու
կարապետ պատանին. զի աղօթիւք
ձերովք զօրացեալք, գոհունակութբ
և հաւատարմութբ ծառայեսցեն աշ
խարհս և ամ հաճոյ արհեստին տպա
գրչութեն Ամէն.



ԱՆՈՒՆՈՎ
ՄՇՈՑ ԳԵՂԵՑԻԿԻ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ